



ՀՀ Մշակույթի նախարարություն  
Ministry of Culture of RA



Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միություն  
Union of composers and musicologists of Armenia



Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ  
Youth State Orchestra of Armenia



Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն հայոց  
Կաթողիկոսի նկար, 1986թ.



Տես էջ 6, 72, 76, 82



Տես էջ 16



Տես էջ 67



Տես էջ 67



Տես էջ 37



Տես էջ 35



Տես էջ 41



ISSN 1829-0019

Երևան 2010 Yerevan

Международный журнал International Journal Угрозамірний міжнародний

# ՀԱՅԱՍՏԱՆ

## Երաժշտական

4 (39) 2010

Musical ARMENIA Музыкальная АРМЕНИЯ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

4(39)2010

Musical ARMENIA

Музыкальная АРМЕНИЯ

ԵՐԱՅԱՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ



ՂԱԽԻՎՈՒՄ Է  
ԱՉԱՐՈՍ ԱՐՅԱՆԻ  
ԺՆԻՅԱՆ 90 ԱՐՅԱՆԻ



«Նախագահի տիկին Ռիտա Սարգսյանը  
Ղազարոս Սարգսյանի անվ. արվեստի դպրոցում»  
Տես էջ 53



Տես էջ 31




Ղ. Սարգսյան, Է. Թադևոսյան  
Տես էջ 14



Ղ. Սարգսյանի ստեղծագործական դասարանի սաները՝  
Տիգրան Մանասիրյան, Ռուբեն Ալբունյան,  
Դավիթ Գիսանյան, Արտյուր Ղազարյան, Արևիկ Լուսինյան, Սվետլանա Ալեքսանդրյան,  
Ռուբեն Սարգսյան, Կարոյան Աննայան  
Տես էջ 2



Ղազարոս Սարգսյանը դստեր՝  
Ռուզաննա Սարգսյանի հետ  
Տես էջ 37



Ղազարոս Սարգսյանը դստեր՝  
Կատարինե Սարգսյանի հետ  
Տես էջ 41



Ս. Սմբատյան, Գ. Մազուե  
Տես էջ 82



Տես էջ 31



Տես էջ 67

# Գրականություն





Եռամսյա վերլուծական, լրատվական, երաժշտական մշակութային պատկերը  
Հայաստանում և Հայաստանը աշխարհում համայն հայության համար:

1a, Sayat-Nova Str.,  
0001, Yerevan, Armenia.  
Tel: (+374 10) 523 993(118), 581 164  
Fax: (+374 10) 563 540  
E-mail: yksc@conservatory.am

Գրանցված է ՀՀ Արդարադատության  
նախարարությունում: Գրանցման վկայական՝  
01Ս 000094  
Տպաքանակը՝ 250:  
«ԵՊԿ հրատարակչություն»:  
Գինը՝ պայմանագրային:  
Ծավալը՝ 11 տպ. մամուլ: Ստորագրված է  
տպագրության՝ 20.11.2012, «Գևորգ-Հրայր» ՍՊԸ:  
Գովազդի տեղադրման համար, դիմել խմբագրության հասցեով:



Ոչ սովորական անհատականություն էր քաղաքիկ մարդ, քաղաքացի, կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը: Իմ հիշողությունը կապված նրա հետ, շատ լուսավոր շերտեր ունի:

Ինչ պարիվ եմ համարում հիշելու ու խոսելու Չարիկի մասին:

Մարդկային ջերմությունը արվեստի իմացությունը՝ գեղանկարչական և իհարկե երաժշտության: Մեծ նկարչի ամեն արարումը լինում է լավ, և՛ խոսքը և՛ զավակը քաղաքիկ:

Նրա նկարագրի այս բոլոր հատկությունները հյուսված էին մերքի ու զգացմունքի ներդաշնակ վեհությամբ:

Բարձր ինտելեկտի և խոր հույզերի կոմպոզիտոր էր, բարձր առաքելությունների տեր մարդ, իր երկրի նվիրյալ քաղաքացի:

Ինչ համար Ղազարոսը թանկ էր նաև նրանով, որ նա մեծ նկարչի արժանավայել որդին էր:

**ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ  
ԶԻՄ ԹՈՐՈՍՅԱՆ**

Мбибсэ ТбсэПо - лпнрпийупс, шжмпгжл,  
дсбзебойо - вьм ожпвьлопгжсоопк  
мйшоптуэя, рп тфуй  
йоужммйджооужкцийк шжмпгжл.  
Гтж шжсуб ждп пвмйлб ржсжрмжужоб т  
гнигыцжсооптуэя й дбснпойшоптуэя  
нътмжк й шфгтуг. По вьм  
лпнрпийупспн гьтплпдп йоужммжлуб й  
дмфвпийц юнпчийк, шжмпгжлпн гьтплий  
рсжеобиобишжойк, рсжебооьн  
дсбзебойоопн тгпжк тусбоь.  
Ем□ нжо□ Мбибсэ епспд й ужн, шун по  
ептупкоок тьо гжмйлпдп цфепзойлб.

**Народный архитектор СССР  
ДЖИМ ТОРОСЯН**

Հիմնադիր՝

լրատվական գործունեություն իրականացնող  
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ»

պետական ոչ առևտրային կազմակերպություն

Վկայական N 03Ա 059505,  
գրանցման փարեքիվը 07.04.2003

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 4(39)2010

Հիմնադրվել է 1998 թվականին

Գիտաբեասական, քննադատական - հրատարակախոսական,  
երաժշտական ամսագիր

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

- Արմեն Բազրյանի Սմբարյան (ամսագրի հիմնադիր-ընթերցող, պրոֆեսոր),
- Շահեն Հակոբի Շահինյան (նախագահ, պրոֆեսոր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ռեկտոր),
- Սերգեյ Գեորգի Սարաջյան (պրոֆեսոր, ԵՊԿ հրատարակչական խորհրդի նախագահ),
- Գոհար Կառլենի Շաղոյան (ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր),
- Ժաննա Պեպրոսի Չուրաբյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
- Մերսի Ա-Ֆայելի Նավոյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
- Ռոբերտ Բաբինի Ամիրխանյան (պրոֆեսոր),
- Իրինա Գեորգի Տիգրանովա (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
- Արարիկ Արծրունի Սարյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
- Ռուբեն Ավետիսյան Տերտերյան (արվեստագիտության թեկնածու PhD),
- Վաղարշակ Վիրապիտյան (պրոֆեսոր),
- Աննա Սենի Արեշաբյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
- Գեորգ Շմավոնի Գյոդայան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
- Էդվարդ Միրայելի Միրզայան (պրոֆեսոր),
- Նելլի Ֆեդոտովի Ավետիսյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
- Դավիթ Գարսևանի Ղազարյան (պրոֆեսոր),
- Լիլիթ Վարդգեսի Երևզակյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
- Լևոն Ալեքսանդրի Զատույան (պրոֆեսոր),
- Կարինե Ազարի Չաղազյանյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
- Մարգարիտ Աշոտի Առաքելյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
- Ալինա Աշոտի Փախչանյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
- Սվետլանա Կորյունի Սարգսյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
- Հենրիկ Համազասպի Սմբարյան (պրոֆեսոր)

Գլխավոր խմբագիր, երաժշտագետ,  
Համարի թողարկման պատասխանատու՝ **ԳՈՀԱՐ ԿԱՌԵՆԻ ՇԱՊՈՅԱՆ**

Պատասխանատու քարտուղար՝ Վարենտին Խաչիկի Թովմասյան  
**Խմբագիրներ**՝ Հովհաննես Ներսեսի Մուրադյան, Սոֆա Մաթևոսի  
Ազնաուրյան (ռուս.), Արմինե Համլեյրի Եսայան (անգլ.)  
**Գեղարվեստական խմբագիր և  
կազմի շեփոքրունը**՝ Գոհար Վիրենի Հովհաննիսյան

Ամսագիրը ընդգրկված է

ՀՀ ԲՈՀ-ի «Ատենախոսությունների արդյունքների տպագրման  
համար ընդունելի ամսագրերի ցուցակում»

Արտատպումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի  
գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է  
հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն  
վերադարձվում:

Գիտական հոդվածները ենթակա են գրախոսման:

ՏԻԳՐԱՆ ԵՂԻԱՅԻ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

«Ճողովրդական արտիստ, Կոմպոզիտոր, պրոֆեսոր»



Ղազարոս Մարտիրոսի Սարյան 1980 թ.

Այսօր հայկական երաժշտական մշակույթի կենտրոնում գրկնվում է կոմպոզիտորների մի խումբ, որի անդամներից յուրաքանչյուրը ծնվել է Հայաստանում

Գիրակցականության խմորման հարուստ ու հեղափոխական մի շրջան է ապրել: Մանկությունն ու պատանեկությունն անցել է մի շրջանում, որն իրավամբ կարելի է անվանել «հայ նոր արվեստի առաջին շրջան»: Հիրավի, ինչպիսի երջանկություն, մարտիրոս ու հոգևոր առաջին սնունդը ստանալ մի ակունքից, որին հետագայում սերունդները պիտի դիմեն, որից սերունդներ պիտի սնվեն, կուրվեն, ամրանան ու հեղուկ կոչվեն Հ. Թումանյանի, Մ. Սարյանի, Ե. Չարենցի, Ա. Թամանյանի հեղինակներ:

Այս սերնդի ներկայացուցիչներից յուրաքանչյուրին նկատի ունենալով Մարտիրոս Սարյանի մարտիրոսներից Եղիշե Չարենցը, երբ գրում էր.

# ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆ

(գրված է Ղազարոս Մարտիրոսի Սարյանի ծննդյան 50-ամյակի առթիվ)

Սովետական կարգերի հաստատման առաջին օրերին: Ծնվել է նոր Հայաստանի վերածնունդի հետ, նախ՝ մարմնով և ապա՝ հոգով ու ոգով:

Այս օրերի, Հայաստանը փրկում է իր վերածնունդի կենդանի հոբելյանը: Իրենց գոյության կենդանի հոբելյանն են նշում այն արվեստագետները, որոնք ապրում են իրենց արեղծագործական կեանքի պայծառ միջօրեին, որոնք գլխավորում են Հայաստանի երաժշտական մշակույթը և որոնց գործունեությամբ ամենից ավելի է ընդլայնվում այն էակները, որ երաժշտության մեջ մեր ժողովրդի հոգեկան կերտվածքի այսօրն է:

Այդ արվեստագետներից մեկը Ղազարոս Մարտիրոսի Սարյանն է. գրչակիցն ու սերնդակիցը կոմպոզիտորների մի խմբի, որի անդամներն են Առևտրային Հարությունի Բաբաջանյանին, Էդվարդ Միքայելի Միրզոյանին, Ալեքսանդր Գրիգորի Հարությունյանին, Արամ Գեղամի Խուրդյանին:

Ղազարոս Սարյան... մի ուրույն կյանքի ուղի և նույնքան ուրույն անուն: Ծնվել է այն օրերին, երբ մեր ժողովրդի գիրակցության ամենավառ դրսևորումը կապված էր վերածնունդի գաղափարի հետ, ապագայի նկատմամբ ունեցած լավագույն հույսերի զարթոնքի հետ:

1920 թվական: Ծնվել է մի գերդաստանում, որտեղ ամենից ավելի էր խլացված մեր ժողովրդի կարողի դարավոր կուրակումը՝ լույսի ու սիրո, կյանքի ու երջանկության, ազնիվի ու գեղեցիկի հանդեպ, և նաև մի փան մեջ, ուր ամենից հանձարեղ շնուվ էր այն դրսևորվում՝ Մարտիրոս Մերգեյի Սարյանի արվեստի միջոցով:

...«Եվ դու, որ մտնելու ես արևային քո դաշտը Քաղելու վարդեր ու մանուշակներ, Փառք քեզ, եթե լինես քո օրերի հետ դաշն Եվ օրերիդ հանդեպ երկաթյա քղանցք չհագնես»:

Առաջիններից մեկը, ում համար ասվել և ում գիրակցության նվիրական հավատամքն են եղել այս խոսքերը, Ղ. Մ. Սարյանն է: Այս հավատարմի ուժն էլ Հայրենական պատերազմի առաջին օրերին ռազմի դաշտ ներքեց երիտասարդ հրամանատարին: Տուն վերադարձավ միայն պատերազմի ավարտից հետո: (Այս երևույթի նշանակությունը ես խորապես ըմբռնեցի Լեհաստանում անցկացված հայ երաժշտության փառատոնի օրերին, երբ փարբեր առիթներով հասարակությանն էր ներկայացվում կոմպոզիտորների մեր խումբը և իր հերթին նաև Ղ. Մ. Սարյանը, որին մի առանձին շեշտ ու իմաստ էր ստանում նրա նաև՝ Լեհաստանի ազգայնագրական համար մարտնչած նրա ազգայնագրում ու գինվոր լինելու պարագան):

Պատերազմի ավարտից հետո շարունակում է կրասար թողած ուսումը Մոսկվայի կոնսերվատորիայում: Մեզանում քչերին է բախտ վիճակվել ուսանելու Դմիտրի Դմիտրիի Շոստակովիչին: Այդ քչերից մեկն էլ Ղ. Մ. Սարյանն է:

Ուսումնառության ավարտից հետո սկսել է ըստ արեղծագործական ու հասարակական աշխատանքի հոգաւար մի գործունեություն:

Ղ. Մ. Սարյանի մասին խոսելիս դժվար է չխոսել մի ընկերակիցի երկու արվեստագետների հոգեկան կապի, հոր՝ որդու վրա ունեցած ազդեցության մա-

սին: Հիրավի, Ղ. Մ. Սարյանի արվեստը ուսումնասիրողի համար այս առանցքը լայն բացահայտումների ու խորհրդածությունների կյուբ կարող է լինել: Արվեստը հողի ծիսաձևն է: Լինելով ծիսաձևի նրման պերճ, նա առաջին հերթին ծնունդ է հողի և նրա արտացոլումն է:

Արվեստը ազնվության, հոգու ազնվականության արտահայտություն է. այն երբեք չար լինել չի կարող, միշտ բարի է:

Շարժումն ու դիմամիզը, խազն\* ու վճռակալությունը մենք մեզ հետ բերում ենք մանկությունից ու սրեղծագործական պահը մեր նախնական ու անեղծ ապրումների զարթոնքն է, կենդանի այնպես, ինչպես ինքը՝ արվեստը: Արվեստի ըմբռնման նման դիրքորոշումներից յուրաքանչյուրը ավագ և կրթաբար Սարյանների իրար կապող մի-մի օղակ է:

Ղ. Մ. Սարյանի սրեղծագործական փորձերը սիմֆոնիկ նվագախումբն է: Սա կոմպոզիտորի համար հնչողական գույների մի հարուստ ներկայակալ է, որից նա օգտվում է մեծ հմտությամբ: Հնչյունի գունային կողմը մեծ կարևորություն է սրանում Ղ. Մ. Սարյանի երաժշտության մեջ: Եթե շարերի համար երաժշտության մեջ հնչողական գույնի խրկողի փրված է երկրորդական դեր, որը չի անցնում հիմնականում դրամատուրգիական կառուցվածքի համար պահանջվող նվագագույնի սահմանները, ապա Ղ. Մ. Սարյանի երաժշտությունը չեռք է բերում մի որակ, որն ընկալվում է որպես սրեղծագործական ուժերի առաջնային զարթոնք, իր էությանը ներանչնական կարևորությամբ՝ որոշիչ:

Դժվար է Ղ. Մ. Սարյանի երաժշտության մեջ գունային խճողված գույնորոշումներ գրկել: Նրա երկերում հնչողական պատարաք միշտ շնչում է թեթևությամբ: Երաժշտական յուրաքանչյուր գործիքի համար ապահովված է այնքան օդ ու փարածություն, որ նա խազի մեջ մրկելով հնչողական ընդհանուր հոսքի մեջ, կարողանա ամբողջ փայլով ցուցադրել իր անհատական գույնն ու երանգը: Նվագախումբային գույների այս խազերին Ղ. Մ. Սարյանը փայլուն է փիրապետում: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ Ղ. Մ. Սարյանի արվեստում գույնի դերը մեծ բարձրության վրա է գրկվում: Գույնի զգացողությունը Ղ. Մ. Սարյանի համար չեռքբերովի չէ: Դա նրա էության մասն է: Նրա պարտիպորներին հնչողական ամբողջությունը ըմբռնված է ու ապրված ներքուստ: Դա նույնքան անհատական ու անհնական ապրում է, որքան մարդու ներաշխարհի բնության ճշմարիտ արտահայտության ամեն մի շեր: Դիպուկ նկարի ունի վարպետը, երբ գրել է. «Գույնը պետք է արտահայտի մեր մեջ ապրող կյանքի բովանդակությունը»: Գույների միջոցով աշխարհն ընկալելու, նրա հրաշքի անդրադարձումն իր մեջ ունենալու հարստությունը ևս ավագ և կրթաբար Սարյաններին իրար կապող օղակ է:

Կարելի է ավելի խորանալ հոր և որդու ար-

\* Խազ՝ հեղինակը որպես տերմին է օգտագործում հնչյուն իմաստով, այնուհետև լայն իմաստով հնչողություն, բառ, միտք, գաղափար (խմբագրական):

վեստներն իրար կապող առանհնահատկությունների մեջ: Ասվածին կավելացնենք միայն մեկը: Ղ. Մ. Սարյանը հաճախ սիրում է հնչյունների միջոցով «նկարել»: Դա նկարելի է ոչ միայն այն վերնագրերից, որ նա փայլա է իր երկերին, երբ գրում է «Սիմֆոնիկ պարկերներ», «Սիմֆոնիկ պանո» և այլն: Սա ունի իր ավելի խոր պարճառաբանությունը: Նրա երաժշտության ծավալման գործընթացը ամենից ավելի պարկեր սրեղծելու գործընթաց է: Դրամատիկ լարված բարձրակետ լինի թե հոգեբանական լարված վիճակ, Ղ. Մ. Սարյանի երաժշտության մեջ հանդես է գալիս որպես միևնույն սրեղծագործական գործընթացը ապրված ու այժմ որոշ հեռավորության վրա դրված մի զգացում, որն արդեն անհաշված է այնքան, որ արդեն ամենից ավելի կարող է ներկայացվել որպես պարկեր: Այստեղ երաժշտության զարգացման և ոճի գործընթացն իր արդիականությունը այդ պարկերը ամբողջականացնելու ընթացք է հանդիսանում, որը և փոխարինում է պարկերում արտահայտված ապրումի անմիջական դրսևորմանը, «այս վայրկյանին ծնված ապրումի» դրսևորմանը: (Անշուշտ, սա չի նշանակում, որ Ղ. Մ. Սարյանի երաժշտությունը պակաս անմիջական է կամ այստեղ նվագ խորությամբ է ներկայացված սրեղծագործողի հոգեկան աշխարհը: Բոլորովին ոչ): Երաժշտական կյուբի զգայական կողմը որոշ հեռավորության վրա ընկալելու և այսպիսով նրան «օբյեկտիվ» մեկնաբանում փայլու պարագան միայն նշված հանգամանքով չէ, որ պետք է բացատրել: Ավելի ճիշտ այս «պարկեր» սրեղծելու պարագան ինքնին հեղինակ է երաժշտական կյուբի և այդ կյուբը կազմող մանրամասների «օբյեկտիվ» գնահատմանը: (Այնպես, ինչպես նկարչի մոտ ամեն մի վերջնահատվածը «օբյեկտիվ» արժեք է, պայմանավորված իրենից «հեռու», իրենից «դուրս» գրկվող նորություն վերարտադրելու պահանջով):

Այս պարագան մեզ մոտեցնում է երաժշտության մեջ հայրնի երևույթներին, որը և կաշխարհում բացահայտել:

«Չսպվածությունը ամեն մի կրթված մարդու հատկանիշն է, այն պարտադիր է նաև երաժշտի համար». գրել է Կարոլ Շիմանովսկին: Հասկանալի է, երբ լեհ կոմպոզիտորն այս խոսքերով ներկայացնում է հակառուսներին իր ընդհանուր միտումները: Նույն հիմքից ելնելով Բգոր Սյրրավիկյանին գրել է. «Բնականից խստաբարո զսպվածությունը հանդիսանում է հազվագյուտ մի հատկանիշ և այն ամենից դժվար է նվաճվում»:

Այն սկզբունքը, որով Ղ. Մ. Սարյանի երաժշտության մեջ իր գնահատականն է սրանում երաժշտական կյուբը, գալիս է նույն հիմքից, որի մասին խոսում են Շիմանովսկին և Սյրրավիկյանին: Ղ. Մ. Սարյանը նույնպես հավատացած է, որ երաժշտական հնչյունը իբրև բնության ընդհանուր կյուբ՝ մարդու ու որոշակի արժեք է ու զերծ զգայականի ու էքստրազի մշուշուր հատկանիշներից, որը նրան միևնույն ախար էլ կոմպոզիտորի սրեղծագործական որոշ շրջանում պարտադրվում է իր զգայականության (ավելի ճիշտ

Երաժշտական ՅՈՒՆԵՍԿՈ 4(39)2010

ինասարքական) ուժն ու հասկանալի ընդհանրացում է բերում կոմպոզիցիայի որոշակի մրաօժողության ոլորտներում, հեղինակարար պայմանավորված է ներանով, նաև, այսպիսով՝ հարաբերական որակ ու արժեք է:

Այս դեպքում կարելի է խոսել Ղ. Մ. Սարյանի երաժշտության մի առանձնահատկության մասին, որը բխում է նախ և առաջ մրավորականի նրա ընդհանուր նկարագրից: Դա նրա արվեստին հատուկ զուգակցությունն է: (Պեք է ասել, որ Ղ. Մ. Սարյանը մրավորական է իր ներաշխարհի կերպով և ոչ լիկ մասնագիտության բերումով): Այս հատկանիշը կոմպոզիտորին գերծ է պահում երաժշտության էությունը ավելորդ էքստրազիզմ ու վերամբարձություն վերակազմելու գայթակղությունից: Դժվար չէ կռահել, որ խորհրդածությունների այս ոլորտը շարժում է երաժշտական գեղագիտության այն պլաթֆորմին, որով բնորոշվում է XX դարի նեոկլասիկական ուղղությունը:

Ղ. Մ. Սարյանի երաժշտությունը գերծ է նեոկլասիկներին բնորոշ միտումնավոր «օբյեկտիվությունից», միտումնավոր՝ «հավասարակշռված» երեվալու ցանկությունից, «զգայական աշխարհին չբխարվելու» ջանքերից: Այնուամենայնիվ, հողվածիս մեջ բերված նկարագրումների սահմաններում Ղ. Մ. Սարյանն իր արվեստում ներկայացնում է նեոկլասիկներին բնորոշ հատկանիշներ: Այս ընդհանուր նկարագիրն ունենալու պայմանով պետք է բացատրել այն, որ նրա շարժումները, եթե անգամ ժողովրդականի հիմքն ունեն, խորապես փարբերվում են իր գրչակիցների համանուն մեղեդիներից:

Ղ. Մ. Սարյանը հայ երաժշտության մեջ առաջիններից է, որ իր երկերում հնչողությունների ամենախորթին զուգորդումներին ու հյուսվածքներին փվել է ներքին պայծառարեսություն ու օրինչափությունների զարգացման մի պարզ ընթացք, որը նոր խոսք էր սովետահայ երաժշտության մեջ: Այստեղ ներկայացված է սրեղծագործական գիտակցության մի աստիճան, որն իր էությանը ընկալվում է իբրև ազար խազ, ավելորդ պայմանականություններից գերծ մի գործունեություն, որի ոգուն խորթ են էքստրաբիկ վիճակն ու վերամբարձ ոգին, ճիզն ու միտումնավորությունը: Այստեղից է Ղ. Մ. Սարյանի պարտիտուրների պարզությունը: Այս է, որ անհար է դարձնում պարտիտուրների մեջ կոմպոզիտորական փեխնիկայի հագեցվածությունը, երբ միաժամանակ երաժշտության ամեն մի բաղկացուցիչ մասն ու մանրուքը ներկայացվում են իրենց հնարավորությունների ամբողջ փայլով ու նշանակությամբ: Հենց այս հիմքի վրա է, որ Ղ. Մ. Սարյանի արվեստը շեռք է բերում անհարականության որակ, այստեղից էլ հասարակական ընդհանուր արժեք ու կշիռ, քաղաքացիական արդի շեշտ:

Չարմանալի բանաստեղծական է Ղ. Մ. Սարյանի երաժշտությունը: Առողջ բանաստեղծականության ու պայծառ քնարականության կնիքը առկա է Ղ. Մ. Սարյանի ամեն մի սպրումի, ամեն մի սրեղծագործության վրա, լինի դա բնապարկեր թե կարակ, պար թե խորհրդածություն, հրճվանք թե կարոյ:

Ղ. Մ. Սարյանի երաժշտության հերոսը զգայուն բանաստեղծն է և երաժշտությունն ինքը աշխարհի, բնության, մարդկանց հետ սիրո բազում թելերով կապված բանաստեղծի սպրումն է: Այս հատկանիշը Ղ. Մ. Սարյանի երաժշտությանը խիստ բնորոշ է, և եթե խոսենք սարյանական երաժշտության ոճի մասին, ապա առաջին հերթին պետք է խոսել այս առանձնահատկության մասին:

Ղ. Մ. Սարյանի երաժշտության մեջ մարդկային հոգեկան սպրումներից ամենարեղծվածը ուրախությունն է, թե՛ իր առօրեական, ժանրային առումով, թե՛ իր կենսատիվիտության, աշխարհակայման հասկացությամբ: Կոմպոզիտորի հոգեկան աշխարհի գոյությունն արվեստում և նրա հարարության պայմանը կապված է լույսի ու երջանկության հետ: Սա նաև մեր բնքունամբ, որի հիմքը միշտ անձնական սպրումն է: Այս է պարճառը, որ գրելաչեի ու ասելաչեի մեջ Ղ. Մ. Սարյանը միշտ նույնակերպ է թե՛ սիմֆոնիկ երաժշտության մեջ, թե՛ էստրադային երգերում, մանուկների ներաշխարհը երգելիս ու ներանձնական խոստովանության ժամանակ: Սա իրավունք է փայլա որոշակիորեն խոսելու սարյանական արվեստի ամբողջական ոճի մասին: Այդ ոճը ճանաչելի է սրեղծագործության առաջին իսկ հնչյուններից: Եվ եթե նրա երաժշտությանը բնորոշ շարժումն առանձնահատկություններ դարձան այսօրվա հայ երաժշտության ընդհանուր բառապաշարի մասը, ապա դրանք չդադարեցին նաև միևնույն Ղ. Մ. Սարյանի մենաշնորհը լինելուց, միևնույն Ղ. Մ. Սարյանի արվեստում իրենց լիիրավ կենդանությամբ սպրելուց:

Չափազանց մեծ է Ղ. Մ. Սարյանի դերը Հայաստանի երաժշտական կյանքում: Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, Հայաստանի երաժշտական ֆոնդի վարչության նախագահ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասարաններից մեկի ղեկավար. այսպիսին են Ղ. Մ. Սարյանի կարարած աշխարանքները:

Այս բոլորը դեռևս պաշտոնավարումների պարզ անվանումներ են, իսկ սրանց փակ արտունագրված է մի իրողություն, որի նշանակությունը շարժում է հանրապետության երաժշտական կյանքում:

Հայ երիտասարդ կոմպոզիտորներից գրեթե բոլորն առանց բացառության Ղ. Մ. Սարյանից իրենց սահմանված հոգարարության ու անմիջական խորհրդի բաժինն են ստացել: Չարմանալի առարաչեռն էր Ղ. Մ. Սարյանն իր հոգարարության արարահայրության մեջ, հարկապես այն երիտասարդների նկարումը, որոնք գրնվում էին երաժշտական արվեստի նախաշեմին և որոնք իրենց անհարականության կազմավորման շրջանն սպրելով, բոլորից շար կարիք ունեին ճիշտ կողմնորոշման:

Եթե հիշարակենք Ղ. Մ. Սարյանի այս և այլ բազում աշխարանքների կարևորությունը, ապա դրանք զուգակշիռ պետք է լինեն նրա սրեղծագործությունների կողքին:

(Ղ. Մ. Սարյանը ուսանողների հետ փնս կազմին)

## Խճանկար



Ղ. Մ. Սարյանը, Ա. Գ. Հարությունյանը, <...>, Ա. Հ. Բարաջանյանը  
Համամիութենական մրցույթի հանձնախմբում, Կիև, 1968 թ.



Ղ. Մ. Սարյան,  
1995 թ.



ԵՊԿ շրջանավարտները պրոֆեսորադասախոսական կազմի հետ.

Ա. Ա. Բարսամյան, Ս. Վ. Կոպտև, Մ. Ա. Բրուտյան, Մ. Գ. Հարությունյան, Գ. Գ. Բուդաղյան,  
Կ. Ե. Մելիք-Վրթանեսյան (պրոռեկտոր), Ղ. Մ. Սարյան (ռեկտոր), Թ. Մ. Արազյան,  
Մ. Ֆ. Տերյան, Գ. Մ. Չերտոսարյան, Ռ. Ա. Աթայան  
Ա. Բարոյան, Ի. Տեր-Օգանեզովա, Լ. Մարտիրոսովա, Ի. Ս. Գասպարյան, <...>, Ա. Միրզոյան, Է. Միրանյան,  
Ա. Սվազյան, <...>, Ն. Ահարոնյան, <...>, Ս. Տոնյան, Ա. Մելիք-Վրթանեսյան, Ս. Ս. Թաշյան  
Յու. Ղազարյան, Է. Արիստակեսյան, Ժ. Ջուրաբյան, Ժ. Բաղայան-Մեհրաբյան, Է. Ռ. Փաշինյան,  
Ս. ..., Կ. Ջաղացյանյան, Ռ. Ամիրխանյան, Մ. Թադևոսյան, Հ. Սալիբյան (Միրիա), Ն. Ջաուարի,  
Յու. Հարությունյան, Ջ. Ասատրյան, Հ. Միմոնյան  
Երևան, ԵՊԿ դահլիճ, 1966 թ.

### Резюме

Статья композитора, профессора Тиграна Егнаевича Манеуряна “Лазарь Сарьян” написана в 1970 году и посвящена 50-летию со дня рождения учителя, ректора консерватории Лазаря Мартirosовича Сарьяна. Это одна из редких статей, когда композитор пишет о композиторе, анализируя деятельность прекрасного знатока современной музыки, симфонического оркестра, а также пишет об эстетических и художественных взглядах и высочайшей интеллигентности Л. М. Сарьяна не только в жизни, но и в творчестве. Это портрет талантливого композитора, прекрасного музыканта, внимательного педагога.

### Summary

An article of a composer, professor Tigran Eghia Mansuryan is written in 1970 and dedicated to 50th anniversary of the teacher, rector of the Conservatory Lazar Martirosovich Saryan. This is one of the few articles where the composer wrote about the composer, analyzing the activities of fine connoisseur of contemporary music, symphony orchestra, and also writes about aesthetic and artistic vision and the highest intelligence of L.M. Saryan, not only in life but also in the works. This is a portrait of a talented composer, a wonderful musician, attentive educator.

**МИХАИЛ АРТЕМОВИЧ  
КОЖАЕВ**

*Композитор,  
кандидат искусствоведения,  
профессор Ереванской государственной  
консерватории им.Комитаса*

//Новое время., 25.12.2010.

**В** истории искусств Армении XX века, века бурного расцвета живописи и музыки, есть имя, неизменно произносимое во множественном числе — Сарьяны. В этой творческой династии присутствует не-

яна тот или иной сюжет представлял собой мгновение, выхваченное из бытия армян, то музыкальная живопись композитора Сарьяна фиксирует фрагмент истории Армении в движении образов звуковых, передающих слушателю всю полноту ощущения времени, того времени, которое воссоздано в звуках музыки.

Так, в монументальном музыкальном панно "Армения" мы слышим и мелодии городских улиц, и звуки деревенского праздника, и музыку великих армянских гор, звучание которых хранится в сокровищнице каждой армянской души. Музыкальное панно, сочиненное в 1967 году — спокойном и уравновешенном, — передает ощущение времени народного благоденствия, безоблачного и самобытного.

В Скрипичном концерте, созданном в 1973 году и посвященном трагически погибшему брату Сарки-

**“Сарьян-фест”:  
музыкальная живопись  
Лазаря Сарьяна**

обычное с точки зрения наследования семейных традиций качество — Лазарь Сарьян, выдающийся армянский композитор не стал живописцем, как его отец — великий армянский художник, а продолжил творческие традиции семьи, создав монументальные музыкальные полотна, в которых так же, как и на картинах Мартироса Сарьяна, запечатлены страсти жизни армянского народа.

11 декабря 2010 года в зале имени Арама Хачатуряна состоялся симфонический концерт, открывший фестиваль, посвященный памяти Л. Сарьяна и приуроченный к его 90-летней юбилейной дате.

И великий армянский художник Мартирос Сарьян, и его сын, выдающийся композитор Лазарь Сарьян принадлежат к славной когорте творцов, сыгравших ключевые роли в становлении и развитии армянского искусства.

В этом династическом "тандеме" проявился уникальный феномен творческого наследования: творившие каждый в своем ответвлении национального искусства, отец и сын создали прецедент прорастания друг в друга очень несхожих видов творчества — в картинах Мартироса Сарьяна звучит величественная мелодия Земли Армянской, а в монументальных полотнах Лазаря Сарьяна, в игре его музыкальных красок можно узреть свет и переливы цветной гаммы картин великого армянского живописца.

Программа концерта состояла из четырёх симфонических произведений Лазаря Сарьяна, каждое из которых представляло собой образец музыкальной живописи. И если в картинах Мартироса Сарья-

су, много глубокой печали — это и скорбь по безвременно ушедшему близкому человеку, и вместе с тем, какая-то обобщенная в музыкальной образности тревога, некое предвестие времен драматических, признаки которой реально проявились в жизни общества семидесятых годов прошлого века.

В симфонии — ее создание датировано 1980 годом — за феерическим всплеском музыкальных красок угадывается глубокомыслие творца, взирающего на мир философски. Ожидание перемен и надежда и желание быть свидетелем наступления новой светлой эры, эры вдохновения и царства смысла жизни, вполне соответствуют тому времени — в великой стране началось что-то новое, неведомое и сулящее наступление эпохи свободы, но... Все обернулось трагедией и личностной — трагически погибла любимая дочь Лусик, и народной — произошло ужасное землетрясение и свершилось очередное насилие над армянским народом. Это удивительно точно было воплощено в прозвучавшей в концерте "Пассакалии", произведении бесконечно трагическом, посвященном памяти дочери, но, несомненно, адресованном и судьбе своего многострадального народа. Сочиненное в 1994 году, во времена пика разрухи государства и социума, созданное при свете свечи, произведение запечатлело срез времен трагических рельефно и образно — оно и стало драматической кульминацией концерта.

Искусство, в том числе и музыкальное, несет в себе духовную память человечества, и если зафиксированные в исторических книгах события вос-



принимаются в качестве формально воспринятых фактов, то в звуках музыки содержится непередаваемое словами ощущение времени, того времени, которое запечатлено пером и мыслью композитора — творца.

Гарантом высокого уровня исполнения симфонических полотен Лазаря Сарьяна стал Государственный молодежный оркестр Армении под управлением молодого талантливого главного дирижера и художественного руководителя Сергея Смбастьяна. Его усилиями осуществлена и эта чрезвычайно трудная для исполнителей и по объему, и по уровню сложности программа, а также множество других как в рамках данного фестиваля, так и в целом ряде других, осуществленных за последние три года (оркестр создан в 2008 году). Репертуар оркестра, несмотря на небольшой срок существования, обширен и охватывает круг труднейших симфонических произведений, в числе коих сочинения величайших композиторов мира и современности таких, как П. И. Чайковский, Д. Д. Шостакович, Л. М. Сарьян, А. А. Арутюнян, Э. М. Мирзоян, Б. Бриттен и многие другие.

Нельзя не отметить выдающуюся скрипачку, кореянку Союнг Юн, имеющую, несмотря на юный возраст, мировую известность. Изумительное исполнение Скрипичного концерта Лазаря Сарьяна стало событием, заметным не только в рамках

данного исполнения, оно инициировало в слушательской аудитории новое представление об этой чрезвычайно сложной технически и концептуально музыке. Скрипичный концерт Сарьяна в виртуозном исполнении Союнг Юн высветил грани музыкальной экспрессии и интонационной выразительности, которые проявились благодаря очень своеобразному, отличному от традиционного плану ин-



Школьные друзья Александр Арутюнян, Арно Бабаджанян, Лазарь (Зарик) Сарьян. 1935. Спустя 46 лет.

Мастерская Мартироса Сергеевича. 1981 г.



терпретации.

Концерт из симфонических произведений Лазаря Сарьяна стал не только важным событием в музыкальной истории Армении, но и вселил надежду на возрождение в ближайшем будущем высокодуховных традиций в национальном музыкальном искусстве.

(см. на обложке)

**Ամփոփում**

Համերգային կյանքի լուսաբանում

Կոմպոզիտոր, ԵՊԿ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Միխայիլ Արտյոմի Կոկժանի հոդվածը նվիրված է «Սարյան-ֆեստ»- Ղազարոս Սարյանի երաժշտական գեղանկարչությունը կոմպոզիտորի ծննդյան 90-ամյակին «Սարյան ֆեստ» փառատոնի համերգային կատարումների մեկնաբանությանը: Մեկնաբանվում է Միմֆոնիայում, «Պասսակալայում» և այլ երկերում իր ժամանակի փիլիսոփայությունը և մտածողությունը արտահայտված երաժշտությամբ, նաև կոմպոզիտորի սիմֆոնիկ կտավների ԵՊՄՆ և դիրիժոր, գեղարվեստական ղեկավար Ս. Ա. Սմբատյանի կատարումների մասին:

**Summary**

Concert life coverage.

Composer, Professor of YSC, PhD Mikhail Artyom “Saryan-Fest: Ghayaros Saryan musical painting” article is dedicated to interpretation of the composer’s 90th birthday anniversary “Saryan-Fest” festival’s performances. The Philosophy and thinking of its time period expressed in music in Symphony, in “Pasakalia” and in other works, and also about the performances of composer’s symphonic music arts by YSSO and artistic director S.A. Smbatyan’s interpretations.

ԺԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԻ  
ԶՈՒՐԱԲՅԱՆ

Արվեստագիտության քեկնածու,  
Կոմիտասի անվ. ԵՊԿ պրոֆեսոր

Հայ կոմպոզիտորական արվեստի զարգացման փարբեր փուլերում փարբեր մտրեցումներ են եղել ազգային մոնոդիային ու նրա սրեղծագործական վերադարձումներին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ մտրեցումները զարգացել են պարզից դեպի բարդը: Այսինքն, սկզբնական շրջանում՝ «բազմաշայնումներդաշնակում», ավելի սրեղծագործական մտրեցման դեպքում՝ «մշակում», «մշակում-ներդաշնակում»: Վերջինս ենթադրում է մոնոդիկ նյութի «ամբողջական ընդգրկում», որպես առանձին ավար-

ժանելի եզրերի փոխազդեցությամբ:

Ղ. Մ. Սարյանի սրեղծագործության մեջ ազգային մոնոդիայի մեջբերման օրինակները շարյեն:

Օժրված լինելով վառ, րպավորիչ, ինքնուրույն քեմաներ սրեղծելու կարողությամբ՝ նա նաև մոնոդիկ մեջբերումներ է արել՝ միայն սրեղծագործության բովանդակային մրահղացումից ելնելով:

Առավել նշանակալի օրինակներից են «Տիրամայր» միջնադարյան երգասացության հարվածային փոխակերպված մեջբերումը՝ «Հայասրան» սիմֆոնիկ պանոյի «Գառնի» մասում, և «Նուբար» ժողովրդական պարերգի մեղեդին՝ «Սիմֆոնիկ պարկերներում»:

«Նուբար» ժողովրդական պարերգին դիմել են հայկական սիմֆոնիկ երաժշտության մեջ Գ. Ի. Եղիազարյանը՝ «Սևան» բալետում, գրված 1955-ին և Ղ. Մ. Սարյանը՝ «Սիմֆոնիկ պարկերներում», գրված նույն թվականին՝ Հայֆիլմ կինոստուդիայի նկարահանած «Մանրուք» ֆիլմի երաժշտության հարվածներում\*:

# Ազգային մոնոդիան ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐԵԱՆԻ արվեստում

տուն սրեղծագործություն:

Այս հաջորդեցին ավելի բարդ ձևերը: Դա խոշոր կրավի սրեղծագործության մեջ մոնոդիկ նյութի «քաղվածային» մեջբերումն է՝ իր փարարեսակներով. ա) լրիվ, բ) հարվածային (ֆրագմենտար) և գ) մոնոդիայի փոքր հարվածի (մոտիվ, ֆրագ) «քաղվածային» մեջբերում: Սա մոնոդիայի փոխակերպման ավելի ակտիվ տեսակն է, որն, ըստ էության սկիզբ է առնում Ալեքսանդր Աֆանասիի Սպենդիարյանի և Արամ Բյայի Խաչատրյանի արվեստից ու խորանում հետագա կոմպոզիտորների սրեղծագործություններում:

Ազգային մոնոդիայի «քաղվածային» մեջբերումների փարբեր տեսակները մեծ տեղ գրավեցին 1940–1950-ականներին ասպարեզ ելած րադանդավոր կոմպոզիտորների գործիքային սրեղծագործությունների քեմարիզում:

Գրիգոր Եղիայի Եղիազարյանի, Ալեքսանդր Գրիգորի Հարությունյանի, Ղազարոս Մարտիրոսի Սարյանի, Առնո Հարությունի Բաբաջանյանի, Էդվարդ Միքայելի Միրզոյանի, Էդգար Մերգելի Հովհաննիսյանի և նրանց սերնդակից մյուս կոմպոզիտորներից շարերի արվեստում մոնոդիայի ակտիվ փոխակերպումներն ու ժամանակակից հնչողական-հուզական արարահայրությունները խորը հոգեբանական հիմքեր ունեն, որոնք պայմանավորված են ֆոլկլորային և կոմպոզիտորական երաժշտության մրածողության իրարից փարբեր, բայց և անբա-

Միևնույն պարերգը սրացել է երկու թավական փարբեր գեղարվեստական վերակերպվորում:

Գ. Ե. Եղիազարյանի երաժշտության մեջ դա ֆոլկլորային նյութի մշակում-սիմֆոնիզացիա է՝ մոնոդիայի ամբողջական մեջբերմամբ, առանց մեղեդիական գծի զգալի փոփոխության: Այն սրացել է շքեղ սիմֆոնիկ զարգացում՝ վարիացիոն-փարբերակային անցկացումներով, պոլիֆոնիկ ենթաշայնային և հարկապես գեղեցիկ կոնտրաստակալային ճյուղավորումներով, պարային հենքի կայունությամբ և գունեղ տեմբրային-հնչյունային հյուսվածքով: Որպես կանացի քնարական կերպարների «խորհրդանիշ», բալետի դրամատրոպիական զարգացման մեջ ժողովրդական մեղեդին գեղարվեստական նոր արարահայրություն է սրացել, դառնալով ոչ միայն ազգային, բալետային սրեղծագործության, այլև հայկական սիմֆոնիկ երաժշտության սիրված ու հնչող էջերից մեկը:

Այլ է Ղ. Մ. Սարյանի մտրեցումը այդ երգին. այն մեջբերված է հարվածաբար և փոփոխված, հանդես գալով որպես հիմնական իթան սեփական քեմարիզմի կառուցման համար:

Նախ նշենք, որ Ղ. Մ. Սարյանի «Սիմֆոնիկ պարկերները» հայ սիմֆոնիկ երաժշտության հիևգ

\* «Նուբար»-ի բազմաթիվ փոխադրումները, գլխավորապես երգի-պարի, ժողովրդական նվագարանների անսամբլների համար, չենք ընդգրկում մոնոդիայի սրեղծագործական վերադարձումների շրջանակում:

մասանի սյուրիային կառուցվածքի սրեղծագործություն է, որը թեև կապված է կիևնֆիլմի բովանդակության հետ (մարդկային կենցաղային և բարոյական ակտիվությունից սկիզբ առնող հրդեհի բռնրկում, աղետի կանխում և այլն), սակայն սիմֆոնիկ ամբողջական կրավը ինքնին անհամեմատ լայն բովանդակային եզրեր է գծում, կապված հայրենի բնության, ժողովրդի ու նրա կենցաղի վառ ազգային պարկերների հետ: Ամբողջովին ներծծված է հայրենասիրական զգացումներով, սկսած «Նախաբանից», ապա «Լուսաբացը» մի հոյակերպ երաժշտական բնապարկեր, հետո «Խնջույք»ը, «Կարակ»ը և «Ֆինալ-վերջաբան»ը:

«Նուբար»ի մեղեդին օգրագործված է «Խրնջույք» պարկերի հիմքում, որը սյուրիի կենտրոնական մասն է, և պարերգի մեջբերումը, իհարկե, կապված է ժողովրդական ուրախության փրամարտությունների հետ: Սակայն սա պարի սիմֆոնիզացիայի այն հարթությունն է, որ կենտրոնացվում է ոչ թե պարի, այլ մարդկային հույզերի փրաբեր նրբախաղերի բացահայտման վրա՝ պարային ռիթմերի փոխակերպումներով արտահայտված:

Բնույթով ու բովանդակությամբ «Նուբար» պարերգը կենցաղային-բնարական երգ է. սիրած աղջրկա՝ Նուբարի գեղեցկությունը գովերգող: Ունի «քառյակ-կրկներգ» երկմասանի կառուցվածք՝  $(a+a)+(b+c)$  պարբերություններով, այսինքն՝ երեք թեմատիկ նյութով ամբողջացող, բայց համաչափ կառուցվածքների հարց-պատասխան փրամարտությամբ, որով և սրեղծվում է երգի ներքին ամբողջականությունը: Մեղեդին ծավալվում է հարմոնիկ միևնոր լադում, 6/8 չափի պարային ռիթմերով, առաջին և վերջին կառուցվածքներում փոնիկայի ու փերցիային օժանդակ հենակերպի, իսկ միջին մասում կվինրային օժանդակ հենակերպի ավելի «ոգեշունչ» ինտոնացիոն ոլորտում:

«Խնջույք» սիմֆոնիկ պարկերն սկսվում է նվագախմբի վերին շերտերից «գահավիժող» փոքր նախաբանով, որում հասարակվում է պարային ռիթմը.

մուտք փալով հիմնական թեմային: Կոմպոզիտորը մեջբերում է «Նուբար» երգի միայն առաջին հարվածը, իսկ հետո հորինում ևս երկու թեմատիկ հարված՝ երգի չեին համապատասխան: «Նուբարի» քառյակային մասի մեջբերված մեղեդին սկզբից ևեք փոխված է, բայց ցայտունորեն մանաչելի: Նրանում պարային, թռչկոտուն ռիթմը փոքր-ինչ հարթվել է, սրացել «դեպաշե» ընթացք: Միևնոր լադը փոխվել է մաժորի (C-dur), իսկ

մեղեդու մոտիվային շեշտերը դարձել են ավելի ճկուն, «քմահաճ» ու փոփոխական՝ մոտիվի մեարական փարբերական շնորհիվ: Ռիթմական գործունը շար կարևոր է նվագակցող շերտերում: Նրանցում խորանում և խորանում են պարային փարբերը՝ պոլիռիթմական, պոլիմեարական զուգահեռներով, 6/8 չափի մերթ երկմասանի, մերթ եռմասանի շեշտադրումներով ու դրանց համակցված հնչողությամբ, որ խորացնում է պղնձյա փողային գործիքների (շեփոր, փրոնթոն) նվագաբաժիններում զուգահեռ սեքստաներով անցնող մեղեդու զրրելգուն, պայծառ ու փոնական փրամարտությունը:

Այսրեղ շար կարևոր է նաև *Allegro energico* փեմայի ընարությունը մոնոդիայի հանդարտ փեմայի համեմատությամբ:

Ֆոլկլորային նյութին հաջորդող ինքնուրույն հորինվածքի երկու թեմատիկ շերտերը օրգանապես կապվում են «Նուբարի» մեղեդու հետ, բացելով պարայնության հեզանկուն ու բնարական կողմերը, և նրա հետ մեկընդմիջվելով սրեղծում են յուրօրինակ ռոնդոյի չե՝  $(b-a1-c-b-a)$ , որում «Նուբարի» մեղեդին ռեֆրենի դեր է կարարում և ամեն նոր կրկնության մեջ նվագախմբի խորացող գույներով հասարարում է իր վառ փպավորիչ կերպարը:

Ֆոլկլորային և ինքնուրույն թեմաների այդչափ հարագատությունը ինքնին զարմանք ու հիացմունք է առաջացնում և խոսում է նախ՝ կոմպոզիտորի փաղանդի, ապա ազգային ակունքների այդքան խորը զգացողության և իմասարնության մասին, որը բնորոշ էր նաև իր սերնդակից գործընկեր-կոմպոզիտորներին:

Մոնոդիկ նյութի մեջբերմամբ և սեփական թեմաներով ամբողջացող երաժշտական կրավի արդի հնչողության և ազգային վառ բնորոշության հարցում կարևորվում են կոմպոզիտորի գրելաոճի անհարական գծերը, դրանց մեջ՝ չեի լակոնիզմ, նվագախմբային թեթև ու թափանցիկ հյուսվածք, նրանում՝ փարածականության ներքին «շնչառությունը» և կերպարի հուզական արտահայտության ջերմ անմիջականությունը: Ավելացնենք նաև հարմոնիկ հարուստ գունախաղերը՝ մաժոր-միևնոր լադային փոփոխականությամբ, փեմբային-ինտոնացիոն ցայտուն գծերով, որոնցում իմարեստիկարական նրբագեղությունը համարեղվում է 1950-ականների հայ կոմպոզիտորական արվեստին բնորոշ թանջր ու վառվռուն գույների հետ:

Երաժշտական ՅՈՒՆԵՍԿՈ 4(39)2010

Իրավամբ, ֆոլկլորային նյութը, մտնելով խոշոր ձևի մեծակերպով արեղծագործության մեջ, դուրս է գալիս մոնոդիկ հնչողության կերպարային շրջանակից և դառնում մի նոր նյութ, մի նոր «երաժշտական իրականություն»՝ իր արեղծարար լիցքերով:


Ինչպես գրում է Ի. Ի. Չենցովսկին. “Фольклор, чем глубже он познается композитором, тем глубже и значительнее оплодотворяет его творчество, толкает на поиски нового, на со-творчество, требует “доказательств” и “опровержений” - чего угодно, но только не копирования” (1. էջ 18).

Ֆոլկլոր-կոմպոզիտոր կապի այս բնորոշման մեջ որոշակիորեն ընդգծվում է երկկողմանիությունը, որի հոգեբանական դրդիչները պետք է որոնել առաջին հերթին, թերևս, արեղծագործողի մոտ:



Ի. Գ. Տիգրանովա, Լ. Մ. Սարյան, Է. Մ. Սիրոզյան, Է. Հ. Բաղդասարյան, Ա. Գ. Հարությունյան, Դ. Հ. Խանջյան, Ռ. Մ. Ահարոնյան  
Ա. Սպենդիարյանի արձանի մոտ, հայ երաժշտության համեզրից հետո, Յալտա, 1980 թ.

Տվյալ դեպքում ֆոլկլորային նյութը դարձել է սիմֆոնիկ կերպի լայրթեմատիկ շերտերից մեկը, որն ընդհանուր զարգացման մեջ փոխում է իր բնույթը, նաև ֆունկցիոնալ նշանակությունը կերպարային ոլորտում, քանի որ «Ֆինալում» հսկողա գալով որպես զարգացման գործոն՝ փազնապալի ու չարագույժ, խոժոռ ու վճռական (միևնուր լադում, մեծացրած փոփոխություններով, հարթված ռիթմով, ինֆրոնագիտն նոր քայլերով), որպես անցած «աղետի» հիշեցում այն նահապատրաստում է «Ֆինալի» հանդիսավոր ավարտը, որում հնչում է «Լուսաբացի» փառահեղ մեղեդին, որպես չոն՝ կյանքի ու Արևի:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Земцовский И. И., Фольклор и композитор., (теоретические этюды), Л., 1978.



ԵՊԿ շրջանավարտները  
Ա. Գ. Հարությունյան և Ղ. Մ. Սարյան հետ  
1990 թ.

Резюме

Статья профессора ЕГК, кандидата искусствоведения Жанны Петровны Зурабян “Национальная монодия в искусстве Лазаря Сарьяна” посвящена теоретическому анализу претворения Л. М. Сарьяном народной песни-танца “Нубар” в сюите “Симфонические картины” и музыке к кинофильму “Мелочи” («Մանրուք»). Дается также сравнительный анализ авторской музыки с фольклорным материалом. Автор прослеживает преломление народной мелодии в симфоническом полотне в роли лейт-темы в целом сочинении.

Summary

Article by Professor of YSC, Ph.D. Janna Petros Zurabyan “National monody in the work of Lazar Saryan” dedicated to the theoretical analysis of the implementation by L.M. Saryan of folk song-dance “Nubar” in the suite “Symphonic Pictures” and the music for the film “Little things” («Մանրուք»). Provides a comparative analysis of the author’s music and folk material. The author traces the refraction of folk melodies in symphonic canvas as leit-topic in general composition.

ՆԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՍԱՅԱԿՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի պրոֆեսոր Ա. Ա. Սարյանի ասիստենտ

Արվեստի յուրաքանչյուր ճյուղում անհատականություններն անվերապահորեն աշխարհ են գալիս ի վերուստ Աստվածային շնորհով օժտված և միայն ընդհանր-հասարակություն-ժամանակաշրջան եռամիասնությունն է որոշում նրանց ասպագա ճակատագիրը: Ցանկացած խոշոր անհատի գեղագիտական հայացքներն իր անձնական, անհատական զար-

բարձրակետում մարդ արվեստագետն է, որ իր վրա կրելով ժամանակի կնիքը, պետք է կարողանա անցնել մեծ փորձություններով, իմաստը և վեր կանգնել այդ ամենից՝ տալով մարդկանց վեհն ու լավարեստականը, հումանիտարականն ու գաղափարականը, բարին ու գեղեցիկը, գեղարվեստականն ու մնայունը:

Այդ քննիչ մեկն էր Ղ. Մ. Սարյանը, ում՝ որպես արվեստագետի շեփոխի և կայացման համար հարկապես կարևոր են եղել Մարտիրոս Մերգեյի Սարյանի և Դմիտրի Դմիտրի Շոստակովիչի ազդեցությունը:

Ղ. Մ. Սարյանը երբեք չդավանակեց Քաղաքացի, Մրավորական հասկացությունների, քանզի այդպիսին էր նրա փոհմական փեսակը, դասարակությունն ու կենսափոխությունը: Նա մրավորական էր իր ներաշխարհի կերտվածքով և ոչ սոսկ մասնագիտության առումով: Դա «դեմոկ-

ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ

գեղագիտական հայացքների շուրջ

զացման հանրագումարն է, որ բազում թեկերով կապվում է նաև դարի հասարակական-քաղաքական գործընթացներին: Գեղարվեստական շեփոխման վրա ազդեցություն է թողնում միջավայրը, բարացած դաստիարակությունը, դարաշրջանի գեղագիտությունը, և յուրաքանչյուր արվեստագետ ընդհանրում է այն, ինչն առավել մոտ է իրեն, համապատասխանում է իր պարկերացումներին՝ կյանքի, իրականության ու արվեստի ընկալման ճանապարհին:

Առավել բարդ շրջադարձերով հարուստ է այն անհատների սրեղծագործական ուղին, որոնց բախար է վիճակվել ապրելու թեկունային դարաշրջանում, երբ հասունանում և շեփոխվում են գեղագիտական նոր պարկերացումներ, ոճական նորմեր և օգնում են ընկալելու արվեստի աշխարհն ու մարդուն ճանաչելու ուղին՝ «ես»-ի դրսևորման և ինքնահաստատման ճանապարհով:

Այսպիսին էր կոմպոզիտոր Ղազարոս Մարտիրոսի Սարյանի ասրած ժամանակաշրջանը (Մեծ Հայրենական, 60-ականների ալիք, Արցախյան գոյամարտ, Խորհրդային Միության փլուզում, Հայաստանի անկախ հանրապետության սրեղծում, դրանցով թելադրված գաղափարական ալիքներ), որ պատմության մեջ մնաց իր քաղաքական, սոցիալ-փոհմական, հերևաբար և հոգևոր, գաղափարախոսական իրացված բախումներով՝ իր անխուսափելի կնիքը թողնելով մարդկային գործունեության բոլոր ոլորտների, այդ թվում՝ արվեստի տարբեր ճյուղերի և դրանք պայմանավորող գեղագիտական հարթության վրա:

Այս ամենի ու մասնավորապես հոգևոր ոլորտի

րապ» երևալու ցանկություն չէր, այլ փոհմիկ մրավորականի համար միակ ընդունելի կենսաչև:

Նա իր սրեղծագործությունների մասին խոսելիս ասում էր. «...Իմ ստեղծագործությունների հիմնական մասը ներքին համոզումներն են, մտածումների և ապրումների արդյունք են» (1, էջ 89):

Ղ. Մ. Սարյանն այն արվեստագետներից էր, ովքեր խորապես զգում էին ժամանակի զարկերակը և գնում նորին ընդառաջ: Կյանքի թեկունային պահերին նա դիմակայում էր հոգևորով, վեհով, գեղեցիկով, կյանքով մահին հաղթելու ազգային կենսափոխությունում և նա բացառություն չէր, արդյոք պարահասկանությունն է, որ Վ. Տերյանը Հայրենիքի կորստին և մահին հակադրում էր Հոգևոր Հայրենիքի գաղափարը, Ե. Չարենցը կորտրածի ու կախաղանների սարսափին հակադրում էր կյանքի, սիրո և հայրենասիրության կենսական երգերը, Մ. Ս. Սարյանը պարերազմի տարիներին ծաղիկներ էր նկարում, հավաքում հաղթանակին, ասելով. «Կյանքն առանց այդ էլ ողբերգական է: Եթե կտավներից էլ դուրս հորդի մահվան շունչը, այդ դեպքում որտեղից քաղենք ուժ կյանքի (ասրելու - խմբ.) համար» (2.):

Ղ. Մ. Սարյանի գեղագիտական մտրեցումների անկյունաքարերից էին նրա արվեստում եղած լույսը, լավարեստությունն ու մարդասիրությունը: Դա նաև իր հորից՝ մեծ մրավորականից եկող կենսափոխությունն էր. «Մեր ժողովրդին պետք է լույս, հավատ ու ձգտում դեպի արևը»: Արև ասելով

\* Ղազարոս Սարյանն իր հոր՝ Մարտիրոս Սարյանի և պապի՝ Ղազարոս Աղայանի մասին (1.):

նա նկատի ուներ հավերժություն, դա նրա փիլիսոփայություն էր, խոսքն»։ - գրել է Ղ. Մ. Սարյանը հոր մասին (3.):

*Առհասարակ, Սարյան ազգանունը նվիրական է հայ մշակույթի համար: Գեղանկարիչ Մ. Ս. Սարյանի աշխարհը կոմպոզիտոր Ղ. Մ. Սարյանի աշխարհի մի մասնիկն է կազմում: Մակայն չի կարելի չնկատել նաև, որ հայր և որդի Սարյանները որքան մոտ, այնքան էլ տարբեր են կյանքի և արվեստի հանդեպ ունեցած իրենց ընկալումներում և դրսևորումներում: Եթե «...Մ. Սարյանի աշխարհը հզոր էր և շարժուն, վառ արտահայտություն էր ինչպես անսպառ ուրախության, այնպես էլ խոր ողբերգականության, ապա Ղ. Սարյանի աշխարհը կամերային էր, խորասուզված, բարի, փոքր-ինչ ամոթխած նուրբ ժպիտով լուսաստվերի խաղով պարուրված» (4.):*

*Նրանց գեղագիտական մոտեցումների ընդհանրությունն իր դրսևորումը գտավ դեռևս 1965 թ. «Մարտիրոս Սարյան» կինոնկար-էստեի համար գրված երաժշտության մեջ (սցենարը՝ Ի. Գ. Էրենբուրգի, ռեժիսոր՝ Լ. Վաղարշյան), որից մեկ տարի անց ծնվեց «Հայաստան» սիմֆոնիկ պաևոն: Այն Մ. Ս. Սարյանի կրավների երաժշտական յուրօրինակ բնութագիրն է, նկարչի և երաժշտի հոգևոր աշխարհների միաշույումը, «գույնի երաժշտության և երաժշտության գույնի փոխկապակցվածությունը» (5. էջ 185), որ դրսևորվեց «...միջոցների խիստ ճաշակի ընտրության, ուրվագծերի գրաֆիկական հստակության, շարժման դինամիկ զգացողության մեջ, որպես հնչյունագունային պատկերացումների ամբողջություն: Վերջինս անմիջապես նրա հոր՝ Մ. Ս. Սարյանի գեղանկարչության հետ ուղղակի զուգահեռներ բերեց, որոնց մասին միշտ նշվել է*

ուսումնասիրողների կողմից» (6.):

*Ի. Գ. Էրենբուրգը գրել է. «...Յուրաքանչյուր դարաշրջան ունի իր աչքերը: Մ. Ս. Սարյանը մեր դարի նկարիչ է և ձգտում է պատկերվածը կապել մարդկային ընկալման հետ: ... Սարյանը չի թաքցնում իր վերաբերմունքը աշխարհի հանդեպ, դա խոր փիլիսոփայությամբ գեղանկարչություն է, որը սատարում է, բարձրացնում մարդուն» (7.):*

*Այս մտքերն իրավամբ կարելի է տարածել որդու երաժշտարվեստի վրա: Վերջինիս արեղծագործության մեջ քիչ չեն աղոթիս էջերը, հարկապես՝ 1970-1990-ականներին գրված գործերում, ուր ողբերգականը կրող կոմպոզիտորն ունկնդրին հաղորդում է բանականությանն ապավինելու ուժ. հիշյալ տասնամյակների երկերն առանձնանում են իրենց ներգործման ուժով, որի հիմքում կորստի ցավի տառապանքներում մկրտված հոգու ասելիքն է՝ ապրած ասելիքը ու ողբերգությունների հաղթահարման կենսափիլիսոփայությունը, որ թերևս միայն Ղ. Մ. Սարյանի՝ պարերազմում կոմպոզիտորի էր ունակ կենսագործելու, սեփական ցավից բարձրանալ ինքնահաղթահարման միջոցով, այն ինքնահաղթահարման, որ նման է ինքնահրկիզման՝ ուրիշին դրանով չիւեղելու, շայրելու, չմոխրացնելու ու չոչնչացնելու համար:*

*Հոր և որդու արվեստներում խաչաձևում են Արևելքն ու Արևմուտքը: Դա մի կողմից արևմտյան կրթության, դասական դաստիարակության, արևմտյան արժեքների, իսկ մյուս կողմից՝ արևելյան աշխարհընկալման, արևի պաշտամունքի և բնապաշտության միաշույումն է՝ ազգային մշակույթի խոր շերտերի գիտակցման ու վերսիմաստավորման ճանապարհով:*

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(39)2010



Ղազարոս Սարյան  
1990 թ.



Ղազարոս Սարյանը հոր  
Մարտիրոս Սարյանի հետ  
1957 թ.

Երկու արվեստագետների՝ կերպարվեստի և երաժշտության եզրերի հարման առավել նյութական, ակնհայտ, տեսանելի դրսևորումներից է նաև այսպես կոչված դիմակի թեման, որն առկա է Մ. Ս. Սարյանի մի շարք կրավներում. «Եգիպտական դիմակներ» (1911), «Նաբոլոնոնոր դիմակով» (1911), «Մեծ եգիպտական նաբոլոնոնոր» (1915), «Չարենցի դիմակարը» (1923), «Իմ ընկերները» (1929), «Ինքնակար դիմակով» (1933), «Կարարինե Սարյանի դիմակարը» (1963) և այլն: Այն առկա է և Ղ. Մ. Սարյանի Սիմֆոնիայում, որն ըստ Ա. Պ. Կամենսկու դիտվում է որպես հավերժության խորհրդանիշ, իսկ Ս. Կ. Սարգսյանի բնորոշմամբ. «Դիմակի կերպարը դառնում է արվեստագետի բանաստեղծական հոգու ներաշխարհի կրող» (8. էջ 54):

Իհարկե, արվեստի երկու ճյուղերը միավորող գլխավոր գործոնը մնում է գույնի զգացողությունը, որը Ղ. Մ. Սարյանի համար ոչ թե շեղբերովի է, այլ էության մի մասը: Գույների միջոցով աշխարհն ընկալելու, նրա հրաշքի անդրադարձն իր մեջ ունենալու հարստությունը ևս ավագ և կրկնակ Սարյանների իրար կապող օղակ է: Տ. Ե. Մանուրյանն այս առիթով գրել է. «Վազարոս Սարյանը հաճախ սիրում է հնչյունների միջոցով «նկարել» (9):

Նույնիսկ կոմպոզիտորի շար սյուեթագործությունների վերնագրերը խոսում են դրա մասին. «Սիմֆոնիկ պատկերներ», «Հայաստան» սիմֆոնիկ պանո: Մակայն սա միակ դրսևորումը չէ: Այն ունի իր առավել խոր պատճառաբանվածությունը: Նրա երաժշտության ծավալման ընթացքը ամենից ավելի «պատկեր» ստեղծելու պրոցես է» (9):

Նրանց արվեստը խորապես ազգային է և դա դրսևորվում է ոչ միայն թեմայում, այլև նրանց մտածողության, աշխարհընկալման մեջ: Ժամանակի երաժշտական տեսնականներին քաջածանոթ կոմպոզիտորը վստահ էր, որ մեթոդը իսկական երաժշտի պարագայում չի կարող ազգայինից հեռանալու հանգամանք դառնալ: Հերևաբար, մտածողությունը, բովանդակայինը, չպետք է անհետանան չևի կադապարում. «...կոմպոզիտորը ինչ մեթոդով էլ որ գրի, եթե իսկական հայ է, նրա ազգային պատկանելությունն անպայման կդրսևորվի» (3):

Այսպիսով, Ղ. Մ. Սարյանի գեղագիտության չեզոքության ընթացքում առաջին հզոր աղբյուրը եղել է Վարպեյի գեղանկարչությունն ու մտածողությունը. «...Իր կյանքի գերագույնը իր հոր՝ Մարտիրոս Սարյանի արվեստն էր: Գիտեր նրա ճշմարիտ արժեքը, խորհուրդը, գիտեր տքնության այն ուժը, որով հայրը կերտել էր այն: Կոմպոզիտոր որդու համար հոր արվեստն ու նկարագիրը բազմաշերտ ու խորունկ դպրոց էր կյանքի, ժամանակի շնչառությունն արվեստում մարմնավորելու համար... Հայր և որդի Սարյանների արվեստում... այն դարձավ մարդ-բնություն և, հատկապես, հայրենի բնություն, մարդ-ժամանակ, մարդ-կեցության հավերժություն, մարդ-տիեզերք կոնցեպտուալ ըմբռնումների արտահայտության կարևոր միջոց: Սրանք նրանց ըստեղծագործության գեղարվեստական կարևոր խըն-

դիրներն էին, ուղղված մարդու հոգևորի խորացմանն ու հարստացմանը», - գրում է Ա. Ա. Սարյանը (10. էջ 3):

Իսկ ո՞րն էր գեղարվեստագիտական երկրորդ հզոր աղբյուրը, որ պիրի սներ Ղ. Մ. Սարյանի երաժշտարվեստը: Դա, անշուշտ, նրա ուսուցիչներ Սարգիս Վասիլիի Բարխուդարյանի, Վարդգես Գրիգորի Տալյանի, այնուհետև Մոսկվայում ուսումնառության տարիներին՝ ամբողջ ռուսական մշակույթի հզոր ազդեցությունն էր, որը դարձավ նրա մտածողության, ժամանակի ռիթմը, շունչը զգալու ունակության, երաժշտական փրամաբանության հիմքը չեզոքող գործոններ:

Այնուամենայնիվ Սարյան-արվեստագետի գեղագիտական հայացքների, սրեղծագործական մտքեցումների չեզոքության համար շար կարևոր է եղել Գ. Գ. Շուպակովիչի արվեստը, ավելին՝ Շուպակովիչը երևույթն առհասարակ, որի ազդեցությունը կոմպոզիտորի սրեղծագործության մեջ գուցե կարելի է համարել իր ժամանակի սուր ընկալման, հոգեբանական խորության, մարդկային ճանաչողության խոր ընդհանրացումների, նուրբ քնարականության, փրամաբանության զգացողության, չևի հղկվածության ամբողջությունը, ինչը, բնականաբար, իր արտահայտությունն է գրել նաև երաժշտական ժանրերի, չևերի, երաժշտարտահայտչամիջոցների կիրառման մեջ, սակայն առնչությունները վերջինիս արվեստի հետ անիմաստ է փորձել կոնկրետ միջոցներով մարմնակնել միանգամայն պարզ է, որ խոսքը մեծ անհարկանությունների մասին է, ովքեր երբեք չեն կարող լինել հեշտ որակելի, կոնկրետ դերալային, բայց երաժշտության ընկալման աղբյուրներն անուրանալի են գեղագիտական ընկալումների ուղղվածության և դրսևորումների առումով:

Ամբողջ կյանքի ընթացքում նրանց միջև շարունակվող մրերմությունը դարձավ կողմնորոշիչ և որոշակի հայացքների չեզոքման նոր դպրոց: Գ. Գ. Շուպակովիչի անչը, նրա երաժշտարվեստը՝ իր ժամանակի զգացումային, ինտելեկտուալ դիմանկարն է:

Նրանց միավորում է ևս մեկ հատկանիշ. իրականության և սեփական բարոյական օրենքների միջև հավասարակշռություն փնտրելու և գրնելու միտումը, կորաված հոգևորի որոնումը՝ բարդ ու հակասական ժամանակաշրջանում: Նրանց արվեստին որոշ իմաստով բնորոշ է «ինքնասահմանափակումը», որ դրսևորվում է երաժշտական նյութի խնայողաբար օգտագործման մեջ՝ առանց ավելորդ ծանրաբեռնվածության. «Պրակտիկան հաստատում է, որ ժամանակակից ամենաբարդ պրոբլեմները պարտադիր չէ, որ արտահայտվեն երաժշտական լեզվի և ձևերի գլուխկոտրուկային բարդությամբ... Ի՞նչ է փնտրտուքն արվեստում: Այն, առանց որի չկա և չի կարող լինել արվեստ: Ստեղծագործելն ու փնտրելը հոմանիշներ են: Նոր խոսքի, նոր հնչողության և գույների ծարավը միշտ եղել է արվեստի շարժիչ ուժը: ...Համոզված եմ, որ իսկական նորույթն արվեստում առաջին հերթին հոգու, գաղափարի նորույթն

է: Չնը արտահայտում է միայն արվեստագետի կողմից գտնված նոր բովանդակությունը, արտացոլում այն արվեստի նյութով: Ինձ դուր է գալիս գերմանացի հիանալի բանաստեղծ Ի. Բեխերի արտահայտած չափազանց հստակ բնորոշումը. «Նոր արվեստը սկսվում է ոչ թե նոր ձևերից, այլ ծնվում է նոր մարդու հետ», - գրել է Գ. Գ. Շուպրակովիչը (15. էջ 12):

*Դմիտրի Սերգեյի Լիխաչովն ունի հեղափոխիչ միտք, որն ընդհանրապես բնորոշում է մրավորականին.* «Նա այն մարդն է, որ մի փոքր նեղվում է նրանից, որ գոյություն ունի, բայց երբեք չի զբաղեցնում ուրիշի տեղը» (13. էջ 189): *Ահա Ղ. Մ. Սարյանի բնութագիրը:* Նա այդպիսին էր և չէր սիրում վերամբարձ խոսքեր. «Ես ատում եմ բարձր խոսքեր, նույնիսկ վախենում դրանցից, դրանք, իմ կարծիքով, նսեմացնում են», - *ասել է կոմպոզիտորը (17.):*

*Ջարմանալիորեն այդպիսին էր և նրա ուսուցիչը՝ Գ. Գ. Շուպրակովիչը:* Մի առիթով, - *պարմում է Լ. Վ. Դանիլևիչը, կարդալով իր սրեղծագործության մասին գրքի ձեռագիրը և համաշայնելով նրա հիմնական բովանդակությանը՝ նա դժգոհ ասել է.* «Սակայն ինչու՞ եք այստեղ գրում «ականավոր, հիանալի...», դա պետք չէ, իրոք պետք չէ» (18. էջ 5):

Դպրոցի վաստակաշար ուսուցիչներից, երաժշտագետ Ծաբե Հովհաննիսյանը ողջունում է, հայտարարում պարային բաժնի սովորողների ելույթը, որը Նիկիտո Պազանիևի «Կամակորը» կարակ պարի բեմադրությունն է, այն իրականացրել է պարուսույց Անահիտ Մկրտչյանը: Այս հանդես եկան Սյրեֆանիա Ղազարյանը (դաշնակահարների Գ. Մարաջյանի անվ. Հանրապետական 7-րդ մրցույթի 2-րդ մրցանակակիր), Սերգեյ Աբրահամյանը («Վերածնունդ» միջազգային 2-րդ փառատրոնի 1-ին մրցանակակիր, Վ. Սպիվակովի կազմակերպած «Москва встречает друзей» 7-րդ փառատրոնի մասնակից), Գոռ Կարապետյանը («Վերածնունդ» միջազգային 3-րդ փառատրոնի դիպլոմակիր), Աիդա Մուրադյանը (եռյակ և քառյակի կազմերով և մենակատարմամբ), քառյակ, որը մրցանակներ չստացավ «Վերածնունդ» փառատրոնում, Ժաննա Հակոբյանը, Դավիթ Ալեքսանյանը, իսկ կլաններահար Սերգեյ Աբրահամյանը այս փարի նոյեմբերին մասնակցել է Լոնդոնում փեղի ունեցած համերգին:

Ղազարոս Սարյանի անվ. արվեստի դպրոցի մանկավարժական կազմը միշտ հեղամուտ է հայկական երաժշտության, կոմպոզիտորների արվեստին: 2010-2011 ուսումնական փարում նշվել է Ղ. Սարյանի, Ա. Հարությունյանի ծննդյան 90-ամյա փարեդարձները:

Երաժշտական խմբերի թվում գործում են փողային նվագախումբը, ժողովրդական գործիքների անսամբլը, որոնք անընդհար թարմացնում են երկացանկերը և հանախ հանդես գալիս դպրոցական



փարաբևույթ միջոցառումներին, իսկ պարարվեստի, քարտրակա, գեղարվեստական բաժինների սովորողները դրանց մշտական ամենագործուն ու անմիջական մասնակիցներն են, դպրոցի դասարաններն ու դասիժները միշտ զարդարվում են աշակերտների նկարած աշխատանքներով: Պարմական դարձած անցած ուսումնական տարում դպրոցի գեղարվեստական խմբերը՝ ժողովրդական գործիքների անսամբլը (Գ. Դանիելյան), քանոնահարների անսամբլը (պրոֆեսոր՝ Ա. Աթաբեկյան), փողային նվագախումբը (պրոֆ.՝ Ն. Գալստյան, Ս. Դանիելյան), առանձնահատուկ նշենք՝ երգչախումբը (պրոֆեսոր՝ Հ. Ա. Վարդանյան), իսկ օժտված աշակերտները, որոնք բազմիցս են մասնակցել և մրցանակներով, դիպլոմներով, պարգևատրվել են վերադարձել միջազգային, հանրապետական քաղաքային մրցույթներից, փառատոներից, սարգապետներից, նաև մասնակցել են հանրապետական, քաղաքային մասսայական բոլոր միջոցառումներին:

Նույնիսկ տասնյակ էջերը չեն կարող ընդգրկել Ղ. Սարյանի անվ. արվեստի դպրոցի նվաճումներն ու շեղբերումները, որոնց մասին խնդրեցինք հակիրճ պարմել դպրոցի ուսումնական մասի վարիչ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ Ժաննա Բաղրամյանին:

Ավանդույթին հավատարիմ դպրոցի աշակերտները հանդես են գալիս ինչպես դպրոցի, այնպես էլ մայրաքաղաքի մեծ և փոքր դասիժներում, տարբեր դպրոցներում, ուսումնական հաստատություններում, դեսպանատներում և այլուր: Իսկ մրցույթներն ու փառատոները, ստուգատեսները մի առանձին բնույթ ու կարևորություն ունեն: Եվ տարվերջին ամփոփվում են մի ընդհանուր հաշվետու համերգով, որն անշուշտ, անհրաժեշտություն է թե՛ դասատուների, թե՛ աշակերտների համար: Երաժշտարվեստն ի սկզբանե բանավարկ է և երաժշտական բաժնում սովորող 750 աշակերտից յուրաքանչյուրը տարվա ընթացքում պետք է անպայման բեմ բարձրանա և այն էլ ոչ մեկ անգամ, իհարկե նաև պարարվեստի և գեղարվեստի բաժիններն էլ իրենց հերթին՝ ցուցահանդեսներ, տարատեսակ ելույթներ են ունենում: Բեմն է որ կոփում, դաստիարակում է ապագա երաժիշտներին, ընտելացնում ելույթների հաճախականությանը, նրանց բեմում պահելու, կեցվածքի արվեստին, իսկ տարվա ընթացքում աշակերտների գեղագիտական դաստիարակությունն է, գեղարվեստական ճաշակի զարգացումն ու բարձրացումը:

*Տիկին Բաղրամյան, յուրահատուկ մի համերգ էր, եթե շքեղ չասենք, 2010-2011 ուսումնական տարեվերջի հաշվետու համերգը, որը հաշվետվություն էր նաև Հանրապետության երևելի երաժիշտներին, որը մեծ նշանակություն ունի, ի վերջո պետական գործիչների և Առաջին տիկնոջ առջև: Գոհ էին բոլորը, յուրաքանչյուր կատարում ջերմորեն էին ողջունում:*

*Ինչպիսի՞ն էր այն Ձեզ համար, որպես մանկավարժ, ուսումնական մասի վարիչ, երաժիշտ:*

Մեծ պատիվ էր և Առաջին տիկնոջ և երևելի



Ժողովրդական գործիքների անսամբլ ղեկավար՝ Գ. Դանիելյան



«Ուզունդարա»  
Ք. Մամյան,  
Ս. Սկրտչյան,  
ղեկավար՝  
Է. Գրիգորյան



Դ. Կարապետյան, Ս. Աբրահամյան, Ա. Մուրադյան,  
Ս. Դազարյան, ղեկավար՝ Ա. Գրիգորյան

երաժշտական գործիչների ներկայությունը, առաջին հերթին մեծ աշխատանքի, տքնանքի արդյունք ներկայացվեց: Նախ այս ուսումնական տարվա ընթացքում դպրոցում գործող գրեթե բոլոր բաժիններում սովորող աշակերտների մեծամասնությունը մասնակցել էր և՛ միջազգային, և՛ հանրապետական մրցույթների, միայն մեկ օրինակ. գեղարվեստի բաժինն այս տարի նվաճել է շուրջ 20 մրցանակ, պարարվեստի բաժինն առավել, իսկ երաժիշտները մրցանակներ շահեցին և Գ. Սարաջյանի անվ. և Գ. Յուրիում կայացած «Վերածնունդ» մրցույթներում և, իհարկե, Երևանի քաղաքապետարանի մրցույթ - Փառատոնը, որին մասնակցում էին մայրաքաղաքի երաժշտական բոլոր դպրոցները, սարյանականները նվաճեցին երկրորդ մրցանակը, որը մեծ նվաճում, առաջընթաց է, որովհետև և՛ արվեստի, և՛ երաժշտական դպրոցների ամենաափսոսական խնդի-

րը աշակերտներ ունենալն է, որոնց մենք կրթում, դաստիարակում, մտածում ենք վաղվա օրվա մասին: Եթե այսօր ունենանք կիրթ մանուկներ, վաղը կունենանք և արվեստը հասկացող, գնահատող ունկնդիր, ազգ: Մենք ուրախանում ենք, որ այսօր հիանալի աշակերտություն ունենք, հպարտանում ենք, որ մասնագետների գնահատանքին ենք արժանացել և պետք է ամեն ինչ անենք ձեռք բերածը բազմապատկելու համար:

Հետաքրքրականն այն է, որ Ղ. Սարյանի անվ. արվեստի դպրոցը ամբողջ տարին ընդունելություն է կատարում, ժամանակի թելադրանքն է: Ճիշտ է, այդ հանգամանքը դժվար կացության մեջ է դնում, սակայն մանկավարժներին աշակերտներով ապահովելու անհրաժեշտ միջոց և արդյունավետ է և դրա

հետ միասին ուսումնական տարվա ընթացքում սովորողները կարող են ըստ ցանկության, կամ բնական անհրաժեշտության դեպքում՝ գործիքները փոխել մեկ ուրիշով, միայն թե աշակերտը կարողանա ինքնարտահայտվել ու ինքնահաստատվել:

*Այսինքն Ղ. Սարյանի անվ. Արվեստի դպրոցի Կրթականությանը, մանկավարժներն ջանում են, որպեսզի մարտը սերունդը գեղագիտական և մասնագիտական լիարժեք դաստիարակություն և կրթություն ստանա:*

*Եվ ներկա գրնվելով ուսումնական տարեկանի հաշվետու համերգին, լսելով մանուկ ու պատանի երաժիշտների կատարումները, հերկելով բեմահարթակին նրանց պահվածքին ներշնչվում ես հավատով, որ նրանք երաժիշտներ են դառնալու:*



Դպրոցի հաշվետու համերգին Ա. Խաչատրյանի անվ. համերգարահում 2012թ.

Սարյանների ընտանիքը, թոռները՝ Լուսինը և Դավիթը, Ա. Ա. Սարյան և դպրոցի տնօրեն՝ Ս. Ա. Մուրիասյան



Հաշվետու համերգի մասնակիցներ.

Սեպտետ, Միացյալ երգչախումբը, ղեկավար՝ Ն. Ա. Վարդանյան, համերգավար՝ Ը. Հովհաննիսյան



Գիտլահարների անսամբլ, ղեկավար՝ Ռ. Նիկողոսյան



Սեպտետ՝ Վ. Առաքեյան, Գ. Կարապետյան, Ռ. Հովհաննիսյան, Ա. Ավանեսյան, Ս. Աբրահամյան, Ս. Ղազարյան, Գ. Կենջեցյան, ղեկավար՝ Ա. Գրիգորյան

## Резюме

**Обозрение:** Статья доцента ЕГК, кандидатата искусствования, журналиста Валентина Хачиковича Товмасыана “Зримые достижения” представляет отчетные концерты Школы искусств им. Л. М. Сарьяна. Знакомит с организацией и методами работы музыкального, художественного и танцевального отделений школы. Оценивает музыкальные и творческие коллективы, существующие в школе, так же выступление лучших учеников и учителей. Неоценима творческая и организаторская деятельность руководства школы во главе с С. А. Сукиасяном.

## Summary

**Review:** Article of YSC pedagogue, candidate of art criticism, journalist Valentin Khachikovich Tovmasyan presents report concerts of School of Arts after L. M. Saryan. Acquaints with the organization and methods of work of music, art and dance departments of the school evaluates music and art groups that exist in the school, also the speeches of the best students and teachers. Invaluable are the creative and organizational activities of the school management led by S. A. Suqiasyan.

ԷԼԵՆ ԱՐԹՈՒՐԻ  
ՅՈԼՉՅԱՆ

**Երաժշտագետ,  
Երևանի Կոմիտասի անվան պետական  
կոնսերվատորիայի 1-ին կուրսի ուսանող**

**Ի**նքնաիրիպ տաղանդի ու բարձր ինտելեկտի տեր Ղազարոս Սարյանի կյանքի ուղին հետաքրքիր է և հագեցած: Նրա գեղարվեստական անհատականությունը շնամտաբեր է ունեցել տարբեր շրջաններում: Ինչպես իր հայրը՝ Մարտիրոս Սեզեյի Սարյանը

խարհն իր ամբողջական դրսևորումը գտավ նրա սիմֆոնիկ գործերում: Միմֆոնիկ նվագախումբը, մրաօձեյակերպի ուրույն կողմերից մեկը լինելով, գերծ է գունային գերհագեցվածությունից, որը կարող է խախտել խոհական և հուզական ամբողջությունը:

Ժամանակի նկատմամբ զգայուն արվեստագետի սրեղծագործական գործունեության համար գեղագիտական որոնումները բնական են: Ժամանակի խորացած ընկալմամբ են թելադրված կոմպոզիտորի վերջին շրջանի գործերը, որոնց թվում չուքակի և նվագախմբի Կոնցերտը, Միմֆոնիան (1980 թ.), լարային Կվարտետը (1987 թ.):

Նա շրջապատում մեծապես գնահատված, սիրված և հարգված անհատ էր: Դրա վառ ապացույցը մի շարք կոմպոզիտորների սրեղծագործական նվիրումներն են Ղ. Մ. Սարյանին: Տիգրան Ման-

## Երեք նվիրում Ղազարոս Սարյանին

նույնպես ծնվել է Դոնի-Ռոստովում: Այսպես երաժշտի մանկության և պատրաստության տարիներն անցել են XX դարի մեծ արվեստագետներից մեկի՝ Մ. Ս. Սարյանի ընտանիքի՝ բազմակողմանի հետաքրքրություններին նպաստող հագեցած մթնոլորտում:

Հարկապես մայրիկի՝ բանիմաց երաժշտասեր Լուսիկ Սարյան-Աղայանի և քեռու՝ երաժշտագետ Մուշեղ Աղայանի ազդեցության շնորհիվ, դաշնամուրի դասերին (Ե. Ա. Խոսրովյան) հետևեցին պարապմունքները (1934-1938) Մ. Վ. Բարխուդարյանի և Վ. Գ. Տալյանի սրեղծագործական դասարաններում: Թեև կարճատև, բայց օգտակար էր ուսումը Մուսկվայի Գնեսինների անվ. երաժշտական ուսումնարանում՝ Վ. Յա. Շերախինի ղեկավարած սրեղծագործական դասարանում: Հարկապես այստեղ դրվեց նրա տեսական լուրջ գիտելիքների հիմքը:

Պատերազմի ավարտից հետո Ղ. Մ. Սարյանին բախտ է վիճակվել Մուսկվայի կոնսերվատորիայում (1945-1950) ուսանել Դ. Բ. Կաբալևսկու, Դ. Դ. Շոտակովիչի և Ա. Ն. Ալեքսանդրովի ղեկավարած սրեղծագործական դասարաններում:

Մ. Ս. Սարյանի արվեստանոցում առանցքային նշանակություն ունեցող գույնը, որպես իրականության արտացոլման խորացած արտահայտություն, ժառանգեց և Ղ. Մ. Սարյանը: Երաժշտության մեջ Սարյանի սրեղծած գունային աշխարհը մարդու բարոյական գեղեցկության և բնության ներքին խոր կապի արտահայտությունն է:

Հայկական ժողովրդական երաժշտության կենդանի հնչողության մեջ կոմպոզիտորը նկատեց իր խառնվածքին, իր գեղարվեստական հոգեբանությանը մոտ հնչյունային փրամաբանություն, մեղեդային ոլորտ: Ղ. Սարյանի երաժշտության գունաշ-

տության, Ռուբեն Ալթունյան, Ռուբեն Սարգսյան, Վարդան Աճեմյան, Սյրեպիան Լուսիկյան, Աշոտ Ղազարյան, Սյրեպիան Ռոստովյան և նրանց կողքին նորանոր երիտասարդ սրեղծագործողներ, որոնց բնական օժտվածության զարգացմանն ու ինքնահասարակմանը մեծապես նպաստեց սրեղծագործական դասարանի ղեկավար Ղ. Մ. Սարյանը: Խելացի բանիմաց խորհրդատու նպաստեց նրանց անհատականության կազմավորմանը, համարձակ մրասնագումների իրականացմանը և մասնագիտական հասունացմանը: Ղ. Մ. Սարյանին չոնված նվիրումներում կարելի է տեսնել թե՛ նրա սաների, թե՛ նրա համագործակիցների սրեղծագործական հղումները: Առանձնացնելով դրանցից երեքը՝ Էդգար Հովհաննիսյանի 3-րդ Պրելյուդը (1960 թ.), Տիգրան Մանուրյանի դաշնամուրի Սոնատը (1967 թ.) և Վարդան Աճեմյանի 1-ին Կվարտետը (1998 թ.), նպատակ ենք ունեցել հետևել այս երեք ինքնաիրիպ և հեղինակավոր կոմպոզիտորների լեզվական մրաօձողության առանձնահատկություններին:

Է. Ս. Հովհաննիսյանը սրեղծագործական ապարեզ մուտք գործեց 50-ականների սկզբին: Նա վաղ տարիքից ըմբռնեց ազգային երաժշտության առաջադիմական մղումներն ու առկա խնդիրները և նվիրվեց դրանց լուծմանը: Կոմպոզիտորի գեղարվեստական ըմբռնումներին խորթ են հուզական ոլորտի արտաքինապես բուռն, ծայրահեղ «աղաղակող» դրսևորումները: Ղ. Սարյանին չոնած դաշնամուրի 3-րդ Պրելյուդում նկատելի է ասվածի իրական ապացույցը: Նրա սրեղծած կերպարի նկարագրում գերիշխում են խորությունը, ինքնամոտիվությունը, գոյավիճակը և հուզական ծայրահեղ զայրվածությունը: Պրելյուդում կոմպոզիտորը խուսափում է շռայլ արտահայտամիջոցներից, հուզական

ՆՎԻՐՈՒՄՆԵՐ - ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(39)2010

ոլորտը ազնիվ է և նրբագագ: Հեղինակն այստեղ օգտագործել է ժողովրդական մեղեդի, որը հարուստ է բազմաշայնության միջոցների հմուտ և հնարամիտ օգտագործմամբ: Է. Ս. Հովհաննիսյանն այստեղ կրկին հավաստում է ազգային ուղղվածությանը, որին անդամակցել է մնացել իր սրեղծագործական ամբողջ գործունեության ընթացքում:

60-ականների սկզբին ինքնաստիպարվելով որպես հայկական կոմպոզիտորական դպրոցի երիտասարդ սերնդի վառ օժիված, ակտիվ դրսևորումներով ապրող երաժիշտ՝ Ս. Մանուրյանն իր գործունեության ընթացքում նվիրական աշխատանքով քաջահայրեց իր սրեղծագործական ունակությունները: Ուսանելով Ղ. Սարյանի դեկավարած սրեղծագործական դասարանում՝ նա յուրացրեց իր դեկավարի ուսանելի խորհուրդները, որոնք նպաստեցին նրա անհատականության զարգացմանը: Մեծ հարգանքի, պարկառուների և սիրո առկայությամբ է պարճառաբանվում թե՛ ինչ զգացումներով և ապրումներով է Ս. Մանուրյանը սրեղծագործական նվիրում կատարել իր ուսուցչին: Ղ. Սարյանին չունած դաշնամուրի Սոնատում Ս. Մանուրյանի համար ինքնանպատակ չի դարձել նորագույն արտահայտչամիջոցների կիրառումը: Դրանք նա ենթարկել է որոշակի մրահողացմանն ու սեփական գրեթե «նոր» ունկնդրի ուղղությունը կենտրոնացնելով ինտելեկտուալ-հոգեբանական ոլորտին: Ազգային անմնացորդ հավաստումներով հանդերձ կոմպոզիտորը այստեղ խուսափել է ժողովրդական թեմաների օգտագործումից: Նոր արտահայտչամիջոցների յուրացման ճանապարհին Ս. Մանուրյանն այս Սոնատում օգտագործել է սերիալ տեխնիկա: Այստեղ արտահայտչամիջոցներն առավել քան ցայտուն են: Դրանք նպաստում են փոթորկալի զգացումների, ինքնամոտի մրքերի, հոգեբանական խորը զգացումների և յուրօրինակ երաժշտական հուզական մթնոլորտի արտահայտմանը:

Ղազարոս Սարյանին է նվիրված նաև նրա սան Վարդան Աճեմյանի I-ին լարային Կվարտետը, որը ի փարբերություն նախորդ երկու սրեղծագործության՝ չունված է նրա հիշատակին: Աճեմյանն այն գրել է իր ուսուցչի մահից չորս ամիս անց՝ 1998 թ.

Օգոստոսի 24-ին: Այս սրեղծագործությունն արտահայտում է ցավի և կորստի խոր զգացումներ, որոնք հենում են բնական և ճշմարտացի: Այն առանձին կարծես մեկը մյուսից ծնվող թեմատիկ կառույցներից կազմված սրեղծագործություն է: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր արտահայտչական կորիզը: Մի դեպքում իրոնապրիզներն են, մյուս դեպքում՝ «լացող» ինտրոնացիաները, մեկ այլ դեպքում՝ շարժումը 3/8-ներով կամ հասպաղումներով: Ակորդներից հեքո մոտիվային շարժման կառույցները նույնպես իրենց մեջ հուզական արտահայտչականության խնդիրներ են ընդգրկում: Կվարտետը մեկ մասանի է, բայց ունի ներքին եռամասնություն: Այդ մասերը հաջորդում են միմյանց հակադրման սկզբունքով: Դա դրսևորվում է տեմպի, չափի, տոնայնական կայունության փոփոխությամբ, ինչպես նաև ֆակտուրայի և կիրառվող արտահայտչամիջոցների հուզական արտահայտչականություն սրեղծելու ներքին խոր մղումով:

Այս երեք անվանի կոմպոզիտորների նվիրումները ապացույցն են այն հարգանքի և մեծագույն սիրո, որին արժանացել է Ղ. Մ. Սարյանը: Երեք փարբեր չեռագիր, գրելաոճ, երաժշտական ինքնարիպ մրածոդություն, որոնք խոսում են փարբեր կողմերից և իրենց նվիրումն են ուղղում միևնույն անհարին: Երեք մեկնաբանություն, երեք հոգեվիճակ, երեք փարբեր զգացական դաշտ, որոնցից յուրաքանչյուրն էլ անկեղծ է և ճշմարիտ:

Ղ. Սարյանը հայկական երաժշտության պարմության մեջ մրավ որպես ինքնարիպ տաղանդի փեր նրբագագ արվեստագետ, իր ժամանակի առաջադեմ միտումներն ու խնդիրներն արժարծած գործիչ: Սրեղծագործական կյանքի առաջին իսկ քայլերից նա գրավեց երաժշտական հասարակության ուղղությունը և ամեն մի նոր գործով ինքնաստիպարվեց, որպես ուրույն անհատականություն ունեցող արվեստագետ: Ղ. Սարյանի գործունեության փարբեր ոլորտները ծառայել են հայ երաժշտության առաջընթացին: Դա պայմանավորված է սրեղծագործական սկզբունքների ազնվությամբ, ազգային ժառանգելու, մշտապես կատարելագործելու խոր չգրումներով:

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(39)2010

Резюме

Описательно-аналитическая статья студентки I-го курса музыковедческого отделения ЕГК под названием “Три приношения Лазарю Сарьяну” - обращение к произведениям трех авторов: “Прелюдия” N 3 Э. С. Оганесяна (1960 г.) и учеников Лазаря Мартиросовича - “Фортепианная соната” Т. Е. Мансуряна и “Квартет” N 1 В. А. Аджемяна. Это знак уважения и любви, выраженный в сочинениях разными почерками, своеобразным мышлением и музыкальными стилями письма. В. А. Аджемяном сочинение написано после смерти любимого учителя, 4 месяца спустя.

Summary

Descriptive - analytical article of a student of 1st course of Musicological department of YSC called “Three offerings to Lazar Saryan” - an appeal to the works of three authors: “Prelude” N 3 E. S. Hovhhanisyan (1960), and students of Lazar Martirosovich - “Piano Sonata” of T. E. Mansuryan and” Quartet “N 1 of V. A. Adzhemyan. It is a sign of respect and love, expressed in the writings of different hands, a kind of musical thinking and writing style. Essay written by V. A. Adzhemyan after the death of his favorite teacher, 4 months later.

**НАРИНЭ КАРЛОВНА  
ЗАРИФЯН**

Композитор,  
Доцент Ереванской государственной  
консерватории им. Комитаса

**Б**люз как законченный вид искусства сложился задолго до рождения джаза и вошел в мировую культуру одновременно с ранним джазом. Действительно, то неповторимое, что отличало эстрадный джаз 1920-х годов от всех других видов легкожанровой музыки, было заимствовано из блюзов – их характерного настроения, оригинальной системы выразительных средств.

В 1920-х годах значительная часть меломанов

*Мне выпала большая честь быть аспиранткой (1992-1993) в классе Л. М. Сарьяна - талантливого композитора-симфониста, видного музыкально-общественного деятеля, педагога, воспитавшего плеяду талантливых композиторов, создавшего свое направление и стиль в армянской классической музыке. Я благодарна судьбе, что сумела получить огромную базу знаний, которой с большой любовью и отдачей делился со своими студентами Л. М. Сарьян. С большим уважением и признанием посвящаю данную статью светлой памяти и 90-летию со дня рождения дорогого и любимого педагога.*

Композитор  
**НАРИНЭ ЗАРИФЯН**

ՀԱՁ, ՈՍԲ, ՓՈՓ...-ՎԵՐԻՆՈՆԻՅԱՆԻՆ

## Стиль блюз в музыке

встретила новые афро-американские виды музыки в штаты. Поразительно, что еще тогда в “звуковом хаосе” “странных” новых афро-американских жанров многие представители молодого поколения белых услышали мотивы, родственные собственному мироощущению. Блюз в чистом классическом виде, вопреки своей необычной внеевропейской художественной системе, стал выразителем духовного мира “разочарованного поколения” не только у себя на родине, но и в европейских странах и нашел благодатную почву для развития. В частности, музыкальная среда послевоенного Парижа, законодателя художественных мод в период модернизма, услышала в блюзах и джазе “дыхание современности ещё до того, как они успели войти в американскую повседневность. К. Дебюсси, И. Ф. Стравинский, Э. Сати, М. Равель, Ф. Пуленк, Э. Кшенек, как и множество менее известных композиторов, сразу поддались обаянию новой музыки XX века, пришедшей из-за океана. Джазовый колорит в произведениях европейских композиторов ощутим наиболее непосредственно через так называемые “блюзовые тона” (“blue notes”). Они, быть может, даже более специфичны в своей выразительности, чем ритмические особенности” (1).

Несмотря на это, значительно расширяется применение ударных инструментов с колористическими целями в партитурах К. Дебюсси и М. Равеля. Ударные используются этими композиторами экономно. В партитуре “Облаков” К. Дебюсси только две литавры, настроенные в “h” и “d”, которые почти не играют. Однако их роль в общей тембровой драматургии пьесы достаточно велика. Впервые они вступают в цифре 1 при первом проведении инвариантного мотива английского рожка. Еще более утонченное применение ударных мы встречаем в “Играх” и во 2-й части “Моря” К. Де-

бюсси. Широкая волна увлечения джазом, охватившая в короткий срок все континенты, оставила след в творчестве многих композиторов первой половины XX столетия. Темброво-фоновое применение ударных – наиболее часто встречающийся в партитуре прием. В балетах И. Ф. Стравинского, при всей остроте ритмического рисунка, ударные не занимают такого доминирующего положения, как в “Свадебке”, редко выступают в равноправной ансамблевости, характерной для “Истории солдата” (2.). И если в рамках европейского композиторского творчества влияние блюза по существу, исчерпало себя уже до 30-х годов, то как самостоятельный музыкальный вид, независимый от оперно-симфонической культуры и даже противостоящий ей, блюз занял видное и прочное место в богатой музыкальной панораме нашей современности.

Кроме того, значительную роль в развитии блюза сыграла мощная миграция черного населения после первой мировой войны в западные и северные города США. В частности, возникновение в Нью-Йорке Гарлема (крупнейший негритянский район) породило широкое и не прекращающееся по сей день паломничество белых американцев в его увеселительные учреждения. В блюзовом искусстве различают три стадии, или три “школы”.

Ранняя, зародившаяся еще в 70-е годы XIX века, носит название “сельских блюзов” (“country blues”). Иногда её обозначают как “архаические” или “доклассические” блюзы. Эту разновидность правильнее всего было бы отнести к фольклору. Вторая школа получила широкую известность как “классические” или “городские блюзы” (“city blues”). Оба названия глубоко обоснованы. С начала века (деятельность первой профессиональной исполнительницы блюзов Гертруды “Ма” Рэйни зафиксирована уже в афишах 1902 года) блюзы пе-

Երանժանյան ՀԱՅԱՍՏԱՆ 4(39)2010



нижение некоторых ступеней мажорной гаммы (чаще всего, терции и септимы, реже – квинты, а иногда и сексты, на какую-то крохотную долю интервала (меньше полутона). Это детонирование воспринимается на слух, как нечто среднее между большой и малой терцией, или как одновременное их звучание (4.).

В 1920-е годы широкое распространение получили симфоджазы – оркестры со струнной группой, представляющие собой в некотором роде разновидность коммерческих джазов. Наиболее типичным представителем симфоджаза является оркестр Поля Уайтмена, популярность которого в те годы была огромна. С ним связана судьба выдающегося американского композитора Джорджа Гершвина. В 1924 году оркестр П. Уайтмена исполнил “Рапсодию в стиле блюз” – первое крупное произведение Дж. Гершвина, который был известен до этого времени лишь как автор многочисленных популярных песен. Симфоджаз сыграл определенную роль в распространении нового вида музыки, который заинтересовал не только исполнителей и публику, но и крупных европейских композиторов (1.).

В какой мере соответствует своему названию знаменитая “Рапсодия в стиле блюз”? Что сохранилось в ней от блюзовой выразительности, а что утеряно? Рапсодия лишь отчасти соответствует блюзу: в ней не ощутим трагический подтекст, который разрушает обманчивое веселье подлинных блюзов. Но зато Гершвин великолепно преломил свойственное им ироническое начало и мощную физическую энергию. Он выразил это музыкальными средствами, в которых приняты и преломлены типичные черты блюзового языка. Разумеется традиции романтического пианизма, как и крупномасштабная форма европейской фортепианной рапсодии, в конце концов подавляют у Дж. Гершвина собственно блюзовое начало. Оставаясь в рамках европейской темпации, европейского тембрового мышления, формообразования, композитор лишь отчасти и очень избирательно воспроизводит “блюзовые тона”. “Рапсодия в стиле блюз” приоткрыла дверь в новые, внеевропейские сферы – и не столько в конкретно блюзовое искусство, сколько в афро-американскую музыку в более широком,

общем плане (1.). С тех пор, как блюз впервые вышел из негритянского “подполья” в городской мир, он продолжает оставаться одним из самых жизнеспособных видов современной массовой культуры. Под его воздействием сложились многие характерные разновидности легкожанрового искусства наших дней. В их числе, творчество “Битлз”, рок-музыка и рок-опера, соул и белый блюз, а также некоторые другие ответвления поп-музыки (1.).

Многие современные композиторы обращаются к блюзу. Перу автора статьи принадлежит произведение “Вокализ”\* (2008) для голоса, фортепиано и камерного оркестра, которое представляет собой развернутую трехчастную композицию в традициях блюза и продолжает традиции симфо-популярного жанра, в котором синтезируется джазовая музыка с техникой современного классического оркестрового письма. “Вокализ” был с блеском исполнен талантливой певицей Соной Шахгельдян и камерным оркестром “Нарекаци” под управлением А. Г. Талалаяна. Произведение “Вокализ” вошло в репертуар многих коллективов, которые в большом успехом исполняли данное произведение на различных сценах в Армении и за ее пределами.

Перу автора статьи также принадлежит “Блюз” (2003) для голоса и фортепиано. Сочинение представляет собой развернутую трехчастную композицию в строгих традициях блюза. В настоящее время произведение готовится к премьере (солистка С. Шахгельдян).

ПРИМЕЧАНИЯ

1. Копен В. Д., Рождение джаза., М.: Советский композитор., 1984.
2. Денисов Э. В., Ударные инструменты в современном оркестре., М.: Советский композитор.
3. Гаранян Г. А., Аранжировка для эстрадных инструментальных и вокально-инструментальных ансамблей., М.: Музыка., 1983.
4. Симоенко В., Мелодии джаза., Киев:Музычна Украина., 1984.

\* Исполнено при содействии Министерства культуры РА в рамках государственного фестиваля «Մեկ ազգ, մեկ սշխույթ» 28.11.2008г.

Резюме

Կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ Նաիրա Կարլի Չարիֆյանը պատմական էքսկուրս է կատարում «Բլյուզի ոճը երաժրշտության մեջ» վերլուծական հոդվածում: Հեղինակը ներկայացնում է բլյուզի ձևավորումը, նրա ազդեցությունը «ոչ ջազային» կոմպոզիտորների արվեստում: Բլյուզին անդրադարձել են Կ. Դեբյուսին, Ի. Ստրավինսկին, Է. Սատին, Մ. Ռավելը, Ֆ. Պուլենկը և այլոք: Հեղինակը հանգամանորեն բացահայտում է բլյուզի զարգացման փուլերը, ոճական կառուցվածքային առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարել բլյուզի հայտնի կատարող-երաժիշտների արվեստին:

Summary

Composer, Yerevan State Conservatory after komitas, associate professor Naira Carli Zarifyan’s historical excursus into the “blues style in music” analytical article. Author presents the formation of blues, its influence on “not jazz” composers’ art. To blues have referred K.Debyusi, I. Stravinsky, E. Sati, M. Ravely, F. Pulenc and others. Author reveals in details the stages of development of the blues, increasing structural peculiarities. Referred to the art of famous blues performers, musicians.

## ԱՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**Գիրիժոր, դոցենտ, Մոսկվայի Պոկրովսկոյ անվ. կամերային երաժշտական քաղաքում**

**Ս**արյանների ընկերակցի հետ ծանոթ եմ վաղ մասնակցի՝ սկսած Մարտիրոս Մարյանից ու Լուսինե Աղայանից և, երբ առաջին անգամ տեսա նկարչի «Իմ բակը» կրավոր առաջին պլանում գունչի պարկերով, մայրիկի սասցի. «Մենք նրանց բակում եղել ենք, էսպես չէ՞»:

Գրելիքս էլ կարող էի սկսել ավագ Մարյաններից բավական ուշագրավ էպիգրամներով, բայց խոսքս անմիջականորեն Ղազարոս Մարյանի՝ ուսուցչի ուսանողական փորձերի անկեղծ բարեկամի մասին է լինելու, որոնց մանավանդ միավորումը բանկ հուշեր է արթնացնում իմ

## Ղազարոս Մարյան. ուսուցիչս եմ բարեկամս

մեջ և որոնց մասին ուզում եմ պարունել սրբիս թելադրանքով:

Գրել Ղ. Մարյանի մասին նշանակում է խոսել կուլտուրայի մասին:

«Կուլտուրա» բառը հաճախ բյուրեղացաբար ընկալվում է լոկ արտաքին մասերանների իմաստով և մարդիկ կիրթ վարվելակերպով իրագործում են մարդ հասկացողությանն անհարթի արարքներ: Այնինչ կուլտուրան ոչ այնքան պահվածք է, որքան որակակնիչ և Մարյանն իրոք կուլտուրական էր ըստ էության:

Լազար Մարտիրոսովիչին դեռևս նախքան անջամբ ծանոթ լինելու, հեռվից-հեռու մարդկայնորեն ընկալում էի մեծ խղճահարությանը և հարակ գիտեի թե ինչու: Պարենրազմի արհավիրքներ երիտասարդության մարտդ փարհներին, անբավելի մեղքի հավերժական զգացողություն մանկուց դժբախտ եղբոր՝ սիրասուն Մարիկի մահվան կապակցությամբ, նույնպիսի զգացողություն ծեր ծնողների հանդեպ, հեղափոխում ընկերակցական դրամա և վերջապես դարեր որբերգական կորուստ, որ եզրափակիչ հարվածը եղավ իր առանց այդ էլ դրամատիզմով հագեցած կյանքի մայրամուտին:

Հայրական հովանու անամպ ու արևաշող կյանքի փոխարեն, լիաբուռն, ինչպես ոչ որ շրջապատում, ճաշակել էր դառնության բաժակը և այստեղանդերձ Լազար Մարտիրոսովիչը մնացել էր բարի և մարդասեր:

Ղ. Մարյանի մոտ ուսումնառություն սկսվեց կոնսերվատորիայի օպերային սիմֆոնիկ դիրիժորության դասարանի բացման շրջանից, երբ խմբավարական ֆակուլտետի 2-րդ կուրսն ավարտելուց հետո, Միքայել Մալունցյանի նախաշեռնությամբ և Լազար Մարտիրոսովիչի համաշայնությամբ բացվեց հիշյալ դասարանը: Նոր ուսումնական փարվա սկզբին ես ու Գեորգ Մուրադյանը կոնսերվատորիայի միջանցքում մտրեցանք Լազար Մարտիրոսովիչին և խնդրեցինք մեզ գործիքավորում առարկայից վերցնել իր դասարան:

- Ի՞նչ... սո... տե...? ..., - կարծես ինքն էր հետ խոսելով արամների արանքից դանդաղորեն թորեց նա և խորասուզվեց մրքերի մեջ՝ անսպասելի առաջարկը ծան-

րորեթև անելու: Կարճ ժամանակ անց, մեր խնդրանքն իրականացավ, ես ու Գեորգը սկսեցինք հաճախել Ղ. Մ. Մարյանի դասարանը: Դասերը տեղի էին ունենում երեկոները, երբ նա համեմատաբար ազատ էր լինում այլ պարականություններից և իր աշխատասենյակում, որտեղ համարյա երբեք խանգարող չէր լինում:

Նախքան պրակտիկ գործիքավորմանն անցնելը Լազար Մարտիրոսովիչը սկսեց պարտիտուրաների տեսական քննարկումներից՝ գործիքավորման հիմնական ըսկրքներն ակնառու ցուցադրելու համար և առաջին պարտիտուրան Հ. Բեռլիոզի «Ֆանտաստիկ սիմֆոնիա»-ն էր, որ Լազար Մարտիրոսովիչը մեզ հետ անցավ մանրադիրակով նշմարելի մանրամասների վերլուծումով, քննարկումը եզրափակելով Հերբերտ ֆոն Կարայանի չայնագրության ունկնդրումով իրենց տանը:

Մեզ համար դա մեծ իրադարձություն էր: Այն փորհների մեր կուրքի՝ ֆոն Կարայանի հարուկեկար չայնագրանակները նոր-նոր էին քափանցում Երևան և յուրաքանչյուր այդպիսի հանդիպումը նշանավոր իրադարձության էր վերածվում: «Ֆանտաստիկ սիմֆոնիա»-ին հաջորդեցին Բ. Բարտոկի «Երաժշտությունը լարայինների, հար-

վաժայինների և չելեստայի համար» ու Ժ. Բիզեի «Կարմեն»-ը դարչյալ ֆոն Կարայանի դեկավարությամբ, այնուհետև Գ. Մալերի 1-ին Սիմֆոնիան Բրունո Վալթերի հանձնարեղ կատարմամբ ու Ջ. Վերդիի «Ռեքվիեմ»-ը Յուջին Օրմանդիի դեկավարությամբ:

Պրակտիկ գործիքավորման առաջին դասին ինչ հանչնարարված էր Մոցարտի, չեմ հիշում որ սոնարի մեկուտեր գործիքավորել լարային նվագախմբի համար: Այդպիսի խնդիրն անդրանիկ փորջ չէր ինչ համար: Դեռևս Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում գործիքագիտություն առարկան անցել էի այնպիսի հանրագիտակ գրումայարերի մոտ, ինչպիսին էր Բորիս Սակիլիարին, որը լինելով մեր ավագ ընկերն ու քաջապեղյակ հեղափոխ պլաններին, առարկան մեզ հետ անցնում էր ուսումնական ծրագրից շար ավելի ընդարչակ, հասնելով մինչև բուն գործիքավորմանը և ես Ղ. Մարյանի առաջին հանչնարարությունը ներկայացրեցի ոչ միայն գործիքավորված, այլև լարային շորիկների, աղեղի հարվածների և տեղ-տեղ նույնիսկ մարմնադրության նշումներով:

Նախապես խոստովանեմ, որ Լազար Մարտիրոսովիչի սկզբնական փրամադրվածությունն իմ նկատմամբ բավական պաղ էր, առանչնապես համակրանք չէի գտն իր կողմից: Ընդ որում, նա առաջինն ու միակը չէր կյանքում, որ ծանոթության սկզբնական շրջանում, առանց ինչ «խելքը գլխին» ճանաչելու, համեարություն հորդորելու փորջեր եմ արել: Դա միշտ զարմացրել ու զայրացրել է ինչ՝ համապարասիան ռեակցիա բորբոքելով մեզս:

Անդրանիկ հանչնարարության կատարումն անակրնկալի բերեց նրան:

Լազար Մարտիրոսովիչը բացեց շեռագիր պարտիտուրան ու ... համրացավ:

Այդ օրվանից՝ ի դեմս Ղ. Մ. Մարյանի, ունեցա անկեղծ բարեկամ և մեքքիս «սարի պես» կանգնած թիկունք: Բազմաթիվ առիթներով զգացել եմ նրա շահագրգռված աշակցությունն իմ գործերին ու ըստ ամենայնի սրտացավ հովանավորությունը փորհներ շարունակ. «փորհներ շարունակ», բայց ոչ մշրապես: Այդ մասին



իր փեղում, իսկ այդ շրջանում...

Ես բավական լարված հարաբերությունների մեջ էի, հեղափոխում իմ լավագույն բարեկամուհու և մերերիմ ընկերոջս մոր, անգլերենի դասախոս՝ Ռինա Արամյանի հետ: Կիսամյակի սրտգարբը հանձնելու չէի ներկայացել, լիկվիդացիոն շրջանում առավել ևս «կողի էի ընկել» նրա խղճի վրա բարդելու համար անբարենպաստ վիճակի և երկրորդ կիսամյակում զրկվել էի կրթաթոշակ ստանալու իրավունքից:

Դա հայրնի դարձավ Լազար Մարտիրոսովիչին և հերթական դասին ինչ մի քանի «քաղցրաթթու» խրատներ փայլոց հեկո զայրացած դուրս եկավ աշխատասենյակից ու քայլերն արագորեն ուղղեց դեպի Արամ Հովհաննեսի Շամշյանի առանձնասենյակ, որը ցերեկային ֆակուլտետի դեկանն էր:

Լուծոյանք և անադունկ ամբողջ կիսամյակ ստանում էի կրթաթոշակ:

Այդ օրվանից հասկացա և հեղափոխում համոզվեցի, որ Մարյանի փրամադրվածությունից կարելի է առատորեն օգտվել, բայց նրա համակրանքը պետք է նվաճել:

Լազար Մարտիրոսովիչը պրոֆեսիոնալ գործիքավորումը հավանում և ավանդում էր դասական սկզբունքներով, ի փարբերություն սիրողական այն թյուր կարծիքի, որն այժմ վերանել է համարարած «красивоучаю-ти, երբ այս գիտակարգն ընկալվում է լոկ գունեղության իմաստով և միայն գույներով արեղծվում են անմեղեղի ու անհարմոնիա սիմֆոնիաներ: Մանավանդ իր սրեղծագործության առնչությամբ՝ Մարյանին պարպադրաբար Մարյանի որդի (alias կրպսեր) դիպարկելը, էֆեկտիվ համանմանությամբ (аналогия) ամենուրեք գույների մասին խոսելը, պարպիրոտրաների մեջ բնապարկեր ու պարկեր փեսները և այլն շար և նպաստել վերոհիշյալ թյուրիմացության ամրապնդմանը գիտակցությունների մեջ, անբավարար չափով անդրադառնալով սրեղծագործական էվոլյուցիային «Միմֆոնիկ պարկերներից» մինչև սիմֆոնիա:

Չէ՞ որ Դյունա և Շիրաուս որդիներին, Կոնստանդին Ռայկինին, Նիկիտա Միխալկովին, Անդրեյ Կոնչալովսկուն, Մերգել Կապիցային և այլոց նկատմամբ անվաշել և անարդարացի կլինեք իրենց ծնողների արժանավոր կամ անարժան գավակներ դիպարկելը: Նրանք անհարակատրություններ են, որ գոյարևում են ինքնուրույն կյանքով: Ղ. Մարյանին նույնպես, մանավանդ գործիքավորման շեռագրով, ես նրան համարում եմ ավելի շար կոնսպիրուկիվիստ, քան կոլորիստ:

Դասարանում Լազար Մարտիրոսովիչն առաջին հերթին պահանջում էր կառուցվածքային մտրեցում պարպիրոտրաների սրեղծման ժամանակ: Սկզբից պետք էր հսկակորեն պարզել սրեղծագործության շարահյուսական կազմությունը, ուղղահայաց և հորիզոնական կառուցվածքները բուն գործիքավորման փեսակերից, հարմոնիկ հաջորդականություններում բաբնված մեղեդիական գծերն ու մեղեդիներում հնչող հարմոնիկ «մթնոլորտ»ը, որոնք պետք է ամրապնդվեն գործիքավորման միջոցներով:

Անա այս հարցերի սպառնչ պարզաբանումից հետո հարկավոր էր անցնել անմիջական գործիքավորմանը:

Ուղղահայաց կազմավորումների մեջ բնականաբար պարպիրոտրան էր անթերի չայնաբաշխում, ուշադրությունը սեռեղելով գործիքների քանակային հավասարակշռությանը, ինչպես խմբերի ներսում, այնպես էլ ընդհանուր նվագախմբում: Քառաչայն և ավելի հարմոնիան պետք է ճշտորեն սիտվեր ամբողջ ուղղահայացության վրա կիրառվող օղակներում:

Տարրական քվադրոլ այս պահանջն ըստ արժանվույն

չի գնահատվում և անհրաժեշտ ինամքով չի իրականացվում, մանավանդ այնքան էլ դյուրին չի իրագործվում, որքան կարծում են առաջին հայացքից: Բուն գործիքավորումից զատ այն կախված է նաև ուրիշ շարահյուսական, շնակազմական, հարմոնիայի և այլ հանգամանքներից, որոնց մասնագետ - գործիքավորողը պետք է հնարդեմ փրապարի:

Շատ մեծ կարևորություն էր փրվում նաև հարմոնիայի օրենքներով ճշգրիտ և սահուն չայնաարտաբայանը, որը նույնպես քվում է ինքնըստիներյան հասկանալի, բայց հաճախ չափազանց թերագնահատվում է, եթե չստեղծ իսպառ անփեկվում, սակայն կարևորագույն դեր է կատարում որակյալ հնչողություն ստանալու համար:

Անգանկալի էր համարվում հավասարակշռության (балансировка) առումով դինամիկ նշաններ դնելու սկզբունքը, նահապարվությունը փայլով գործիքների ընդրությունն ու ինչպես ասվել է քանակական համաչափությանը և իր պարպիրոտրաններում էլ՝ հավասարակշռության նշանակությամբ դինամիկ նշանները սակավ են:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում հանգուցային կերերում հնչողական հակադրությունների սրեղծմանը նվագական խմբերի միջև, համարարած կիսա-tutti-ների միապաղաղությունը հաղթահարելու նպատակով:

Ինչպես փեսնում ենք վերոգրյալ և շարունակելի բազմաթիվ օրինակներից, դասարանում «նոր աշխարհներ» չէին հայտնագործվում կամ անհայտ գաղտնիքներ չէին բացահայտվում, ինչպես քվացել է սահմանափակ ուղեղներին, այլ ավանդվում էին ժամանակի և սլարմության քննություն բռնած դասական հիմունքները, որոնց փարբեր դրոյթներին կարելի է հանդիպել այլ աղբյուրներում: Բայց հարկանշականը Մարյանի համար՝ ճշգրիտ չայնաբաշխում և ճշգրիտ չայնաարտաբայանում՝ առաջնային պահանջներին, կրուկ հակադրում էր հեղափոխ քայլերի սրեղծագործական մտրեցումն, այդ պարճառով իրախոսվում էր ամեն, նույնիսկ սիսալ խիզախումը: Դասարանում հաճախ կարելի էր լսել «ճիշտն էսպես է, իսկ ուզածդ ինքդ մտածիր»: Նա չէր պարպադրում և երբեք չէր բռնանում ուսանողի կամքի վրա՝ թողնելով, որ վերջինս անձնական փորձով կողմնորոշվի իր խառնվածքին ներդաշնակ ճիշտ ու սիսալի մեջ, որն ի վերջո հանգեցնում է կենսափորձով հաստատված վարպետության:

Անա այս խնդիրներին զուգահեռ, իհարկե չէր կարող չանդրադառնալ նաև պարպիրոտրայի գունային դինամիկայի, փեմբերի, գարդարուն հնչերանգների և նման հարցերին: Բժախնդիր ու պահանջկոտ էր այս հարցում Լազար Մարտիրոսովիչը մանրակրկիտության աստիճան, հարկապես չայնաբանների միավորման և ընդհանուր ֆոնից առանձնացվող մեղեդիների գործիքների ընդրության հարցերում: Ի միջի այլոց՝ «իկքը երգելով» շրթունքներով կարողանում էր արպաբերել փեմբերի համարեղ հնչողության ցանկացած համարդում, որից հետո կասկած չէր մնում գործիքների ընդրության մեջ: Սեկիական սրեղծագործություններում նա երանգավորումն իրականացնում էր գլխավորապես չայնաբանների ներդաշնակ միավորման միջոցով, ավելի սակավադեպ՝ գործիքների փեխնիկական հնարանքների կիրառումով, որ մեծամասամբ չարաշահում են անսիրոք գործիքավորողները:

Այս կետում պետք է հարուկ շեշտել, որ Մարյանի սեփական գործիքավորումների և դասավանդման պահանջների միջև ընդհանուր համերաշխության հետ մեկտեղ, նկատվում էին որոշակի փարբերություններ, նույնիսկ հակասություններ:

Սա հեղաբրքրական և ուշագրավ դիպողություն էր,

որի իմաստը քացահայրվեց ժամանակի ընթացքում:

Այո, Մարյանի պահանջածն ուսանողներից ու սեփական արեղծագործությունը միայնակից փարբերվում էին նշանակալի չափերով և մի քանի առումներով: Նա չէր կարող Ն. Ա. Ռիսնսկի-Կորսակովի նման օրինակներ բերել սեփական արեղծագործություններից, որովհետև դասավանդում էր ընդհանրապես գործիքավորում դասընթացը, իհարկե հենվելով սեփական փորձի վրա, բայց ինքը արեղծագործում էր յուրովի և հարկապես ուշ շրջանի արեղծագործություններում երբեմն շեղվում էր ավանդական նորմաներից:

Առարկան դասավանդվում էր, ինքը արեղծագործում:

Անշուշտ դա թույլ տրված վրիպում չէր, առավել ևս՝ պարահասկանություն, այլ մեթոդաբանական գիտակցքված նկատառում կապված ընդհանուր մասնագիտության և անհատականության դրսևորման հետ: Դա նրա, որպես մանկավարժի մեծ արժանիքն էր, որ չէր ծնում իրեն կրկնօրինակողներ, այլ առարկան յուրացրած ինքը ընդունույն ուղիներ որոնող անհատականություններ, իսկ նկարները փարբերություններն իր արեղծագործական փարբերն էին, որ նա կիրառում էր նվագախմբային փեխնիկայի փրիսպետրված անկաշխակությունը:

Իր վերաբերյալ նշված փարբերությունը կապված էր նաև դասավանդվող գիտակարգի և արեղծագործությունը կատարող բուն նվագախմբի մասնավոր իրավիճակի հետ: Առարկան կարելի է և պետք է մատուցել իդեալական կերպարանքով, բայց իրականությունն այլ պայմաններ է պարտադրում: Դասարանում կարելի է վերցնել և՛ հնգալար կոնյուրաբաս, և՛ միջնադարյան Viola da Gamba, իսկ կատարելու համար ...

- Սովետական Միության մեջ, որտեղ կա հնգալար կոնյուրաբաս, որ գրել ես, - ասում էր Լազար Մարտիրոսովիչն ուսանող կոմպոզիտորներից մեկին:

Ինքը վարպետորեն էր արեղծագործության գաղափարն արտահայտում եղած ռեսուրսներով, առանց զիջումների առկա պայմաններին: Տպավորություն է արեղծրվում, որ ռեսուրսների պակաս նա ընդհանրապես չի զգացել և պետք է լինել հենց այնպես, ինչպես կա և ոչ այլ կերպ: Այնինչ դասարանի վերացական պայմաններում, նույնիսկ անզեն աչքով քացահայր էր, որ արեղծագործության պարտիկուրան կստանար միանգամայն այլ կերպարանք: Վերացականության մասշտաբն անսահման է:

Նշված փարբերությունը մեկ հանգրվան ևս ուներ: Գործիքավորումը կոմպոզիտորների և դիրիժորների համար պահանջում է ոչ միայնասկ մտրեցում: Ընդհանուր հիմունքներով հանդերձ, եթե կոմպոզիտորների համար առաջնայինը սեփական արեղծագործությունները գործիքավորելն է, ապա դիրիժորների համար՝ հեղինակների գործիքավորման ոճն ըմբռնելն է:

Մեզ՝ դիրիժորներին փեսական մասի հղումներն անում էր Հ. Բեռլիոզի, Ն. Ա. Ռիսնսկի-Կորսակովի, Ֆ.-Օ. Գևարդոյի, Շ.-Մ. Վիորիի և մյուսների ֆունդամենտալ փրակտիկաներին, որոնց շարքում, ի միջի այլոց՝ Ղ. Մարյանն առանձնապես չէր արժեքավորում Ռոզալ-Լեիցկու քառահարորը, համարելով, որ այնտեղ շատ են ավելորդությունները:

Վերոգրյալից պարզ է, որ առարկան Լազար Մարտիրոսովիչը դասավանդում էր ոչ փարբերայնորեն, այլ մեթոդաբանորեն մտածված և մշակված կերպով:

Ինչպես ասվել է, գործիքավորումն ուսուցանվում էր երաժշտական այլ գիտակարգերի՝ հարմոնիայի, պոլիֆոնիայի և հարկապես երաժշտական ձևի հետ սերտ կապի մեջ և այս առումով հիշարժան է Լազար Մարտիրոսովիչի համար հարկանշական մի դեպք:

Վիչի համար հարկանշական մի դեպք:

Օհան Դուրյանը Ռադիո-հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի հետ իրականացնում էր Բուրլենի 4-րդ Միմֆոնիայի կատարումը, որի առթիվ խիստ ոճի պոլիֆոնիայի գործիքավորման մասին հարցով դիմեցի Լազար Մարտիրոսովիչին:

- Մյուս անգամ քեզ կպատասխանեմ, - կարճապես դադարից հետո ասաց նա, - Մինչ այդ կհարցնեմ Գայանեին (Չեքոտարյանին. - Ա. Մ.), կամ Սակկիլարիին՝ (պոլիֆոնիայի մասնագետներին. - Ա. Մ.) ու կասեմ:

Այդպես էլ արեց:

Նման ռեակցիան և՛ զարմանալի էր, և՛ անսպասելի: Ուսուցչի այդօրինակ անկեղծության հանդիպում էի առաջին անգամ, որ սկզբից փրահորեն զարմացրեց ինձ, իսկ հասկանալուց հետո խորապես ցնցեց իր նշանակությունը: Չէ՞ որ այդ պահին նա հեշտությամբ կարող էր մեկ-երկու ճշմարտանման բաներ ասել փակավիճի քերամբալի, ուստի անսպասելի մի բնագավառից և զուրիս ազարել պարասիսանավորությունից: Կարող էր գոնե լրբեղ ուրիշներից հարցնելու մասին: Ոչ: Լազար Մարտիրոսովիչն այլ կերպ վարվեց՝ յօգրվեց դիմացինի չինացությունից բանիմաց փեքով «թոզ փչելու» համար ուսանողի երեսին: Ընդհակառակն՝ ընդզոված պարասիսանավորության ու սեփական խոսքի հեղինակության զգացողությունները նրան պարտավորեցրել էին առանձնահարուկ վարքագիծ և իմ ուսուցչին իմ աչքում մի քանի աստիճան ավելի բարձրացավ:

Հեղազայում ես առիթներ ունեցել եմ համոզվելու Մարյանի արժանապարտությանը լի համեմատության մեջ:

- Ինչո՞ւ է նա մեզմից լավ երաժիշտ իրեն համարում, - զայրանում էր նա ինքնապարծությանը հոռուցած, հասներ մեկի մասին արտահայտվելիս, - ես այդպես չեմ վարվում նույնիսկ ուսանողների նկատմամբ:

Դա իրոք այդպես էր:

Գործիքավորումներից մեկում ջութակների նվագաբաժնում փոքր սկրավալի սոլո-ից կառուցվող կվարտան նշել էի *divisi*: Լազար Մարտիրոսովիչը թե.

- Կարիք չկա *divisi*, թող յուրաքանչյուրը նվագի կվարտան:

- Այդ կվարտան չի նվագվի, - պարասիսանեցի ես, - բաց լար *басок*-ի վրա կվինտայից փոքր ինտերվալ չի ստացվում:

Ի դեպ՝ այդ կարևոր քացառության մասին, գործիքավորման վերաբերյալ գրքերում նշված չէ:

- Խնդրի յուրաքանչյուր ջութակահարի, քեզ համար մաքուր կվարտան կնվագի:

Դասարանից դուրս եկա և առաջին մարդը, որին հանդիպեցի Հակոբ Լոզյանն էր: Ներս կանչեցի, գործիքը հանել փվեցի, ցույց փվեցի ինտերվալն ու ասացի.

- Նվագի:

- Հնարավոր չէ, - եղավ պարասիսանը:

Հաջորդ դասին բերել էր Մ. Չուլակիի փրակտիկա, որտեղ նշված են ջութակով կատարվող հնարավոր ինտերվալները:

Մարյանի դասարանում գործիքավորում սովորելը համարվում էր պարտաբեր: Իմ փորձերից մեկի ժամանակ փավոհարուտի Կարյա Սաղաթելյանին դիտողություն արեցի, որ չափ երկրորդ ուրևակը (*сeдaлo*), ներքին ակոսում (*рыбeя*) լինելու փոխարեն, գրկվում է միջին ակոսում, որի հետևանքով Լա մաժորի փոխարեն հնչում է լա մինոր: Ընդմիջմանը շրտապով մտրեցավ ինձ.

- Գործիքավորում ու՞մ մոտ եք սովորել...

- Մարյանի և Սակկիլարիի, - եղավ պարասիսանը:

Հայրնի երաժշտագետ Միխայիլ Եվզենիի Տարակա-

նույր ծագումով հայ է, բնիկ դարաբաղցի և սերուն էր Մեղիք-Փաշայանների, Ղորղանյանների փոհներից: Նա հայարար իր ազգային պատկանելությանը, աղջկան կոչել է իր մոր՝ Արիենիկի անունով: Վերջինս Մոսկվայի կոնսերվատորիայի փոկալ բաժնին ավարտելուց հետո ցանկացել է սովորել կոմպոզիտորական բաժնում, սակայն հորհրդային շրջանում երկրորդ բարձրագույն կրթությունն արգելված էր: Եվ ահա Լազար Մարտիրոսովիչը զգալով Արիենիկի փառանքը, շրջանցելով օրենքը նրան ընդունել է Երևանի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնի իր դասարանը: Ընդհանրապես Լազար Մարտիրոսովիչի նա դարձավ ինքնավար, վառ անհատականությամբ օժտված կոմպոզիտոր, մի շարք արժեքավոր սրբազան գործությունների հեղինակ, որոնցից հարկապես հիշատակելի է «Ծրո» օպերան ըստ Պլատոնովի համանուն փիլակի:

Այն ժամանակ ես ապրում էի Մարյան փողոցում և իմ սովորության համաձայն վաղ առավոտները փնջի դուրս գալիս ոչ մեկ անգամ ակնապես եմ եղել Լազար Մարտիրոսովիչին իրենց փողոցի քաղցր ծաղկաբույսերը դուրս դնելու: Իսկ երեկոները դասից հետո միևնույն ճանապարհով փուն վերադառնալիս, իրենից եմ լսել Ֆլեմինգի պենիցիլինի գյուլի և Պաստերի հայրնագործության մասին հետաքրքրաշարժ պատմությունները, որոնց փայլորդային փայլ էր կարողացել Մորուսի և Էնգելզարդի կենսագրական վեպերը հիշյալ գործիչների մասին:

Մեկ անգամ Լազար Մարտիրոսովիչը հերթական դաս ընդհատեց թե. «Լազար հայրիկիս ծննդյան օրն է, պիտի շուր գնամ»: Մարտիրոս Մարյանը ծնվել է փետրվարի 29-ին, այդ պարտադրով ծննդյան օրն ընդգծված հանդիսավորությամբ էր նշվում՝ չորս փարիկ մեկ, մանավանդ կյանքի վերջին փարիկներին: Հագնվեցի՛ր և շրապով դուրս եկանք, իսկ ճանապարհին Լազար Մարտիրոսովիչը մանրամասնորեն բացատրեց թե, ինչպես են նման դեպքերում հաշվարկում փարիքը, ընդհուպ մինչև XVIII դարի ծնվածները, եթե այդպիսիք լինեն XX դարում:

Երևանի երաժշտական կյանքի նշանավոր իրադարձություններից եղավ մեր անգուգական ուսուցիչ Միքայել Մալունցյանի համերգային գործունեության վերակսումը սրբի կրկնակի ինֆարկից հետո: Համերգներից սրացած փայլորդային այնպիսին էր, ինչպիսիք լինում են եզակի երևույթները կյանքում, երբ մշտապես էնդոֆոնալ զգացողությամբ է հիշվում վերապրած յուրաքանչյուր պահը, յուրաքանչյուր ֆրագան: Երկրորդ համերգի ծրագրում կարարվեցին Գեյրուսի երկու Նոկյուրները, Հոնեգերի 2-րդ Սիմֆոնիան, Մոցարտի ջութակի 5-րդ Կոնցերտը և Վալենտի «Թշուղ հոլանդացին» օպերայի Նախերգանքը:

Համերգի հաջորդ առավոտյան գնացի Մարյանի դասին: Հիացական խոսքեր շառլետուց հետո...

- Էրեկ լսեցի՞ր հայ երաժշտությունից էջեր, - ասաց Լազար Մարտիրոսովիչն ու վարակիչ ծիծաղով լցրեց դասասենյակն, ի նկատի ունենալով Գեյրուսի «Տունախնայություններ» նոկյուրները:

Նա ընդհանրապես օժտված էր յուրաքանչյուր արախտությամբ:

Ուսանողներից մեկին կոնսերվատորիայի գործիքների հավաքածուից պետք էր փրամադրել ջութակ, և այդ հարցով նա մտավ Ա. Հ. Ծամշյանի առանձնասենյակ Ղ. Մ. Մարյանի ու իմ այնպիսի լինելու պահին:

- Արամ Օզանեսովիչ, կոնսերվատորիայի գործիքների պահեստից ինձ մի հատ ջութակ չե՞ք տա՞:

- Ա՛յ տղա, կոնսերվատորիայի ոչ թե պահեստից, -

խոսակցության միջամտեց Մարյանը, - այլ կոլեկցիայից: Եթե կոլեկցիան «պահեստ ա», ուրեմն Արամ Օզանեսովիչը... «պահեստապետ ա»:

Ուսանողների և ընդհանրապես մարդկանց նկատմամբ Լազար Մարտիրոսովիչը նրբանկատ էր և փակփով վերին աստիճանի: Մարտիրոս Մարյանի մահվան օրը ես ու կոմպոզիտոր Ռուբեն Մարգարյանը, որն այդ շրջանում մրախոգված էր մի կարևոր գործով, մտրեցանք Լազար Մարտիրոսովիչին ցավակցություններու հայրնելու: Մեր մեկնած շեռքերն ամուր սեղմելուց հետո, Ռուբիկի շեռքը մի պահ պահեց իր ափի մեջ:

- Ո՞նց եմ գործերդ...

Կյանքի այդպիսի՝ բուպեին:

Կամ...

Միքայել Մալունցյանի մահվան առթիվ փված հոգեհացին Լազար Մարտիրոսովիչը հսկզուցյալի ընդամենին ուղղված բաժակաճառի վերջում նշեց.

- Միքայել Մովսեսովիչի (ի դեպ՝ Մարյանը միակն էր համարարած Մոխենիչի փոխարեն հայերեն ձևով կոչում) զավակներից ես չեմ կարող զատել նրա աշակերտներից, որոնք նույնքան ծանր են կրում ուսուցչի կորուստը, որքան անմիջական ժառանգները, և ներկայումս մենք կանգնած ենք շատ դժվարին խնդրի առջև, ինչպե՞ս լուծել նրանց հետագա ուսման հարցն այսպիսի անփոխարինելի կորստից հետո:

Ուսանողներից սեղանի շուրջ ներկա էի միայն ես և ինչ անչափ շոյված զգացի սիրելի Լազար Մարտիրոսովիչի նրբազգացությունից կյանքիս ամենաճանր պահերից մեկին:

Մրանք փարբեր են, որոնք նկարագիր են վերհանում:

Վերոհիշյալ «դժվարին խնդրի» լուծման առիթով Լազար Մարտիրոսովիչն իմ նկարմամբ դարձյալ առանձնականահարուկ վերաբերմունք ցուցաբերեց:

Մալունցյանը վախճանվեց 1973 թվականի փետրվարի 18-ին ուսումնական փարվա ուղիղ կեսին: Հունվարյան արշակուրդներից հետո 4-րդ կուրսի երկրորդ կիսամյակի սկիզբը նշանավորվեց դասարանի ղեկավարի անժամանակ մահով:

Մեր կուրսը, որպեղ հիևզս էինք՝ Լևոն Աբրահամյանը, Չավեն Վարդանյանը, Վալերի Հովհաննիսյանը, Գևորգ Մուրադյանն ու ես, փարբեր իրադրությունների մեջ էինք գտնվում: Գևորգն այդ փարի գինվորական ծառայության կապակցությամբ պետք է ամեն գնով ավարտեր կոնսերվատորիան, Լևոն Աբրահամյանին կցեցին Ս. Չարեքյանին, Չավենին՝ Մ. Տերյանին, Գևորգին և հանգուցյալ Վալերիին՝ Ռ. Մանգասարյանին, իսկ ես երկմըրում էի Տերյանի և Չարեքյանի միջև, երբ հանկարծ...

- Արի փորձենք Մոսկվայի կոնսերվատորիա, - անսպասելիորեն առաջարկեց Լազար Մարտիրոսովիչը:

Նման փարբերակը ոչ մեկի մըքով չէր անցել, որ նույնպես կուզեին օգրվել և ես այն ընդունեցի ցնծությամբ: Լազար Մարտիրոսովիչն այս առթիվ այնպիսի դիմումներ գրեց Սվեռնիկովին, որպիսիք չգիտեմ՝ ու՞մ համար է երբեք գրել: Բարեխախտաբար դրանք պահպանվել են և ժամանակ առ ժամանակ դրանց ընթերցումն ամեն անգամ սիրտս լցվում է սիրտ ջերմ զգացողությամբ դեպի Մարյանը: Ես հարմար չեմ գրկում այսպեղ հրապարակել:

Յավոք, իմ փոխադրվելն ի սկզբանե դարապարտրված էր շախոդման ոչ միայն այն պարմառով, որ ես արդեն 4-րդ կուրսում էի, իսկ փոխադրվելն ուսումնական կանոնադրությամբ կարարվում էին ամենաշարք 3-րդ կուրսում, այլև Սվեռնիկովը հենց այդ փարի արշակել էր արարակարգ հրաման: Մոսկվայի կոնսերվատորիա չկարարել ոչ մի փոխադրում, ոչ մի բուխից Մարյանի նամակ:

ները հասցեատիրոջը անգամ չհասան, այդ պատճառով էլ մնացին մոտ:

Միս այսպիսի վերաբերմունքից հետո, ես սրտի խորին ցավով չեմ կարող չելել, որ Լազար Մարտիրոսովիչն էլ ենթարկվեց այն «հովանավորության» հետևանքներին, որոնց շնորհիվ ես հայրնվեցի մի իրավիճակում, երբ մարդիկ մոռանալով փարթական դիվանագիտության մասին, չեն բաքցրել իրենց իսկական դեմքը ցույց տալու և անզգուշորեն ցույց տվեցին այնպիսի, որ այլ պարագաներում և այլ մարդկանց շրջապատում մնացել են չբացահայտված: Բայց իմ դիրքավորումից անսրտ դժմարություններ է դրսևորվել յուրաքանչյուրի ու լինելը, այլ ոչ կահյալ վիճակում ցուցադրած վարքագիծը:

Մարյանի վերաբերմունքի փոփոխությունից ամենայն խորությամբ զգացի փոժեղուս չափը: Եթե ենթարկվեց Մարյանն, ապա պարզ էր ավելի հեռու, առավել ևս անձանոթ մարդկանց վրա գործած ներշնչումը: Բայց հենց նրա խորքացումն էր ամենացավալի կորուստն ինչ համար, որովհետև նախորդել էր անօրինակ ուշադրությունը: Միգուցե դա բնական է՝ հակվել դեպի հաղթողները և աչքաթող անել փոժածներին:

Լազար Մարտիրոսովիչը բարեբախտաբար ոչ ամբողջությամբ, այլ մասամբ ու ոչ մշտապես, այլ, ինչպես ասել եմ, մի ժամանակահատված ենթարկվեց վերոհիշյալ իրադրության հետևանքներին մինչև օպերայում անցկացրած մրցույթը, ուր նա ներգրավված էր հանձնաժողովի կազմի մեջ հայրուկ, հեռահար նպատակադրումով: Այլապես ի՞նչ առնչություն ուներ կոնսերվատորիայի պաշտոնաթող ռեկտորն օպերային թատրոնի հերթական դիրիժորի ընտրության հարցում: Ես այդ ժամանակ էլ ինքնասիրտությունս վիրավորված զգացի, որ իմ ուսուցիչն ինչ նեցուկ լինելու համար չի հրավիրվել հանձնաժողովի մեջ, այլ ուրիշին «բրդելու»:

Բայց րեդի ունեցավ չնախարեալվածը: Իրենց համար չնախարեալվածը: Մրցույթի արդյունքն ու գործած փրկավորությունը երկարատև անհայտությունից հետո, ըստ երևույթին շատ բան էին հասկացրել ու հիշեցրել Մարյանին, մեզն արթնացնելով այն, ինչին ես սովոր էի և որոնց մասին նա բարձրաձայն խոսել էր մերեմական շրջանակներում: Կարարվեց վերաբերմունքի շատ կրքերով «մոդուլյացիա», կասեի նույնիսկ՝ վերածնունդ և արհեստականորեն փքեցրած մրցույթը (երկու փուլ, պարկառելի հանձնաժողով) շահելուց բացի, ես համոզված էի, որ գլխավոր հաղթանակը ոչ միայն և ոչ այնքան օպերայում պաշտոն գրադեցնելու էր, որքան Մարյանի համակրանքը կրկին նվաճելը:

Օպերայում աշխատելու փարիներին իրականացրեցի Տ. Չուխաջյանի «Լեռլերիջի» կոմեդիայի նոր բեմադրությունը Մարյանի գործիքավորմամբ և դա առիթ էր, որպեսզի Լազար Մարտիրոսովիչը ներկայանա փորձերին: Նախորդ բեմադրությունն իրականացրել էր Յուրի

Գավթյանը, բայց այժմ ռեալ հնարավորություն էր ընկերվել շուրթակների միջև գոյացող ինտերվալները րեդ-րեդ կարարել օկրավ *divisi*-ով, դրանով իսկ խուսափել սրանց ավելորդ բանձրացումից փայլալուս փողայինների օգնությամբ և ես Լազար Մարտիրոսովիչին հարուկ հրավիրեցի փորձերին: Դա հետևանքներ ունեցավ:

Միս այն դիրքորոշանս ևս մեկ հասարատումը, որ Լազար Մարտիրոսովիչը հաճախ ելնում էր ոչ միայն կաթիներային ճիշտ գործիքավորումից բղթի վրա՝ այլ պրակտիկ իրադրության օբյեկտիվ գնահատականից, երբ նկատի է առնվում կոնկրետ կոլեկտիվն ու նույնիսկ կոնկրետ կարարողը:

Մեզան փարիներ, ես լքեցի իմ հարազատ Երևանը: Այցելություններս Հայրենիք աստիճանաբար սկսեցին կրել առավելապես էպիգոդիկ բնույթ և հերթական այցելություններից մեկի ժամանակ՝ 1996 թ. ամռանը հանդիպեցի Լազար Մարտիրոսովիչին իր մեքենայի դեկին նստած:

- Բարև ձեզ, Լազար Մարտիրոսովիչ, - մեքենայի կողքից մտերևալով դիմեցի ես, - ինչպե՞ս եք:

